

Հայոց արշալույսները թող ծագեն մոր աղոթքով



Եթե երկրագնդի մակերևույթը միանգամայն հարթ լիներ, օվկիանոսն այն կծածկեր մոր 2700 մ հաստությունն ունեցող ջրի շերտով:

**Հարույր ԴՈՒՐԱՎԱ,
օվկիանոսագետ (ԱՄՆ)**

Եթե երկրագնդի մակերևույթը միանգամայն հարթ լիներ, եւ կանգուն մնար միայն Փամբակի լեռնաշղթայի Մայրասարը, ապա երկրագունդը ջրաշխարհին յոթ մետր բարձրությունից կնայեր եղվարդ հսկայականի խոյացրած Սոր հուշարձանը՝ մշտաբարուն, աշխարհի ու նրա բախարհի համար աղոթող եւությամբ:

Սամվել ԽԱՆԱԹՅԱՆ

Մայրության արձանը՝ «Դյուցազնագրքում»

Հաճելի լուր ստացվեց Երևանից. «Դյուցազնագիրք» դյուցազունների ասոցիացիայից հայտնում են Փամբակի լեռնաշղթայի լեռնան գագաթին՝ ծովի մակերևույթից 2707 մետր բարձրության վրա կանգնեցված Մայրության արձանը (քանդակագործ՝ Սարգիս Ղարիբյան) ճանաչվել է նվաճում և գրանցվել ՀՀ «Դյուցազնագրքում»:

Սա հիանալի առիթ է՝ մեկ անգամ ևս անդրադառնալու Մայրասարին, Մայրության արձանին և դրանց վերաբերյալ խոհերն ու մտորումները կիսել ընթերցողի հետ:

Երկրագնդի բազմամուն ու բազմահազար հուշարձանների թվում հառնում է ևս մեկ՝ Մոր հուշարձանը՝ անմախաղեպը, եզակին, վեհն ու միակը, անկրկնելի՛ն՝ ինչպես յոթ հրաշալիքներից յուրաքանչյուրը, բայց և առավել նվիրական ու հարազատ:

Բոլոր մոլոր վշտերն ուներ մայրս՝ մոլոր մայրերի, Ասես խղճի խտացվածքն էր մայրս՝ բոլոր մայրերի, Ձեզ եմ երգում, մայրեր, մորս սրբությունը երգելով, Մայրս տեսիլն էր յոթնացեղ արծիվ ու լոր մայրերի:

Մշեցու թռռ, «Հայփոստի» Վանաձորի մասնաճյուղի տնօրեն, «Մշո զարմ» գիտակրթական հի նախագահ եղվարդ հսկայականի մայրը՝ թիվ 18 դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Օֆելյա Հարությունյանն էլ «բոլոր մոլոր վշտերն ուներ մայրերի» ու ասես նրանց «խղճի խտացվածքն» էր, սրբության սրբոցը: Երևի



հենց սրանով պիտի պայմանավորել մայրապաշտ որդու խելահեղ որոշումը՝ Մայրության արձան կանգնեցնել քաղաքի մերձակա, բարձրադիր սարերից մեկի գագաթին: Ընտրությունը կանգ առավ Փամբակի լեռնաշղթայի Ղարադայ (Ա. քար) լեռան վրա: Բայց ինչո՞ւ՞ օտարահունչ, թուրքական Ղարադայ: Եվ էդ, հսկայականի առաջարկով սարը վերանվանվեց Մայրասար: Սա էդ, հսկայականի կողմից մի յուրահատուկ դաս էր երիտասարդությանը: Կարիք կա՞ արդյոք հիշատակելու, թե ինչպիսի խոչընդոտներ են հաղթահարվել Էղվարդ հսկայականի կողմից բաղձալի նպատակին հասնելու համար: Սակայն ամեն մի դժվարություն ոչինչ է այն հզոր կամքի ու սլացքնուցի առջև, որ առաջնորդում է նրան: Այդ կամքն ու միտքը ծնունդ են մոր նկատմամբ ունեցած որդիական մեծ սիրո և անհատական երախտագիտություն: Ու Մայրասարում հպարտ կանգնած է 2,3 մետր բարձրությամբ՝ մոր բետոնակուռ արձանը, բոլոր մայրերին նվիրված արձանը: Հպարտ ու գեղեցիկ, որն արծվենի հայացքով իր երկնամերձ բարձունքից մշտապես հսկում է լեռան ստորոտում փռված Վանաձորին, աշխարհին, ու իր օրհնանքն է սփռում, որ խաղաղ ու անդորր լինի մարդկանց հոգիներում, որ բոլորի հոգիները ջերմանան սիրուց: Մայրական սիրուց: Ու մինչ այդ իր բարձունքում միայնակ խոկացող սարը դարձավ ուխտատեղի, ուխտավայր, ուր ամեն տարի՝ սեպտեմբերի երկրորդ կիրակի օրը կազմակերպվում է ուխտագնացություն: Գալիս են ծանոթ ու անծանոթ, վանաձորի և ոչ վանաձորից՝ հյուրեր, Հայաստանի տարբեր բնակավայրերից հավաքվում են մեծաթելու մորը:

Լուռվա աշխարհում ամեն լուսաբացի, արևի առաջին ճառագայթները լուսավորում են ոչ միայն մեր լեռնագագաթները, այլև Հայոց մոր լուսապսակ ճակատը:

Այստեղ հայոց արշալույսները ծագում են մոր աղոթքով... Եվ եթե Էղվարդ հսկայականն այս մեծագործությամբ իր երախտագիտությունն ու սերն է հավերժացրել իր և աշխարհի բոլոր մայրերի նկատմամբ, ապա մենք, յուրովի, հպարտանում ու պանծալի հրճվածք ենք ապրում այդ կոթողի մեջ տեսնելով նաև յուրաքանչյուրիս սերն ու երախտագիտությունը մեր մայրերին:

Ամեն ուխտագնացության, մոր արձանի մոտ, Մայրասարի բարձունքում տեղադրվում է մի մոր խաչքար: Դրանց թիվն այսօր ութն է՝ խաչքարագործ վարպետներ Սերգեյ Դանիելյանի և Բոգդան Հովհաննիսյանի ինքնատիպ աշխատանքներից: Կգա ժամանակ, և այստեղ կնկատվի խաչքարադաշտ: Բայց ոչ մեռելոց, այլ ապրողաց: Քանզի խաչքարերը նաև լինելության, հարատևության խորհուրդ ունեն:

Եվ այսպես՝ Մայրասարի բարձունքում ծովի մակերևույթից 2707 մետր բարձրության վրա վեր խոյացած «Մայրության» արձանը ճանաչվել է նվաճում և գրանցվել ՀՀ «Դյուցազնագրքում»: Սա եզակի կոթող է, որն արժանանում է նման գնահատանքի, պատվի: Բայց սա միայն տեսիլական նվաճում չէ, այլ նաև բանականության, բարոյական արժեքների հաղթանակ: Ո՞վ գիտե՞ գուցե նաև սա՞՝ նկատի ունեցել դյուցազունների ասոցիացիան՝ նման որոշում կայացնելով: Ոչ թե միգուցե, հաստատ: Շնորհավոր, բոլոր մայրապաշտ գավակներ:

Լեոն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ու գամված ենք այս հողին...

Հարցազրույց Ալվարդ Պետրոսյանի հետ

Սերը գնաց այս երկրից, Ատելությունն ուսն առած, Փուչ հեղեղն է բառերի Տալից գծված իջնում ցած:

– Սննդական և անսննդական ցավի, որբեր-գուրթյան դրոշմով ձեր բանաստեղծությունները Ֆեյսբուքում շատերին անակնկալի բերեցին: 2003-ին գրված բանաստեղծությունները չափազանց այժմեական էին ու ճշգրիտ արտացոլում էին այսօրվա իրողությունները, հայ մարդուն համակած տրամադրությունները: Արձագանքը բուն էր, անդրադարձն՝ անմիջական՝ ձեզ տանջող ցավը մեզ էլ է պատել:

– Գիտե՞ք, կարգին չարություն էլ չկա, չարության մի չափ կա, որ ստեղծագործության մոտ չի ուժ է, մրցակցության, առաջընթացն ապրելու, հարթելու, սեփական գաղափարները, ինքնությունը հաստատելու հնարավորություն է: Չկա դա, փոխարենն անհավոր կենդանական չարություն կա, որը մարդկային չի, ոչնչացնող է, տգեղ: Ու սերն էլ մի բան չի, դալուկ, թույլ, դատարկ բառերով քողարկված մի բան է: Երկու շատ հզոր՝ մարդուն հարի՛ր զգացնունքներ այսօր լավը չեն:

– *Յին ու Նոր տարվա սահմանագծին՝ Ֆեյսբուքում Նոր կյանք ստացած վերոհիշյալ և բազում բանաստեղծությունների տողատակերում ընդհանուր առմամբ հասկանում ենք և զգում, թե ինչ մտորումների, խոր խոհերի մեջ է Ալվարդ Պետրոսյանը:*

– Քանի որ հրապարակային-հասարակական ակտիվ կյանքով չեմ ապրում, տնից դուրս չեմ գալիս, ակնդետ հետևում եմ ինչ է կատարվում, քանզի անտարբեր չեմ կարող նայել: Ինձ բացակա չդնեք ճիշդ կար ներսումս, թե՛ ես անգոր վակված չեմ վշտիս մեջ: Այո, անգորությունից որոշեցի 2003 թվականին հրատարակված իմ գրքից բանաստեղծություններ տեղադրել Ֆեյսբուքում: Հանկարծ հասկացա, որ այն, ինչ ուզում եմ ասել, գրքում կա, արդեն ասել եմ: Չգիտեմ, որքանով են տաղանդավոր այդ բանաստեղծությունները, բայց գիտեմ, որ շատ անկեղծ են: Հաճելիորեն զարմացա, որ վարկենական արձագանք եղավ հանրության կողմից: Մեկնաբանություններ, նամակներ էլ կային ինձ փաստորեն դեռ փնտրում են ասպարեզում: Որքան էլ պարփակված լինես ինքդ քո մեջ, դա միշտ հաճելի է: Ընդ որում, հետաքրքիր բան կա՝ մի կողմից ասպարեզում սերունդ է, որը մի քայլ այն կողմ կանգնած իրենից ավագներին չի ճանաչում, մյուս կողմից օրինակ, Ֆեյսբուքում բանաստեղծություններին հանդեպ բազմաթիվ երիտասարդների արձագանքն ինձ հույս ներշնչեց, հասկացա՝ ինչ-որ պորտալար դեռ կապում է նախորդ սերնդին եկողների հետ:

– Սիավասիկ, 2003-ին գրված ես մեկը, որն այսօր նսե՛ր՝ ի հեճուկ «դեպի Մաքսային միություն» կարգախոսը նուստագիլի հրճվանքով ընդունողների լինի ասես՝ Ազատություն, բեռ ես դարձել ուսերիս Վանդակները մեզ են կանչում թովելով...

– Պիտի կարողանանք հասկանալ, թե ինչ



է նշանակում ազատությունը, անկախությունը, հայրենիքը: Խնջույքի սեղան չի: Այդ բանաստեղծությունը դուք հիշատակեցիք «ազատություն, բեռ ես դարձել», բայց դա սարսափելի բան է, որ մարդն իր ազատությունը բեռ դարձնի, տեր ուզի, Մաքսային միության գնացող մի գանգվածը տեր ցանկացողներն են, ոչ թե հաշվարկել են, թե դա է մեզ անհրաժեշտ: Այս գանգվածն է ինձ վախեցնում, ոչ թե այսօրվա քաղաքական վճիռը: Այնքան պայմանագրեր են կնքվել: Բայց դա դեռ վերջը չէ, ստրկամտությունն է վերջի սկիզբը: Այս խնդիրը մեր ազգի գլխին Մաքսային միություն գնալու որոշումով չի, որ սկսվել է: Մա մի քանի հարյուրամյակ սապատ դարձած հոգեվիճակ է, որն ինձ շատ վիրավորում է: Ինքս կողմսակից եմ Մաքսային միության կազմում Ռուսաստանի Դաշնության հետ լինելուն, նույնքան հարգանքով եմ վերաբերվում (թեպետ, չեմ հասկանում) Եվրամիության նկատմամբ բաղձալի ցանկություններ ունեցող մարդկանց, սակայն այս բոլորի մեջ խելացի, հաշվարկված, վերլուծված միտք հասարակության մեջ չտեսա. ինչո՞ւ, ո՞րն է մեզ պետք հարցը ես պատասխանը չկա: Եվրոպային փրանալու մեջ քաղքենիական գրգիռ կա, որն ինձ զարմացնում է: Թե ինչու են հայերն անընդհատ ուզում ձերբազատվել իրենց արեւելյան արմատներից, չեմ հասկանում: Արեւն արեւելքից դուրս է գալիս, Արեւելքում մայր է մտնում: Արեւելքը խորությամբ չպեղված, չուսուճասիրված, չգնահատված աշխարհ է, ընդամենը տուրիստական չափանիշներով են գնահատում, այնինչ մարդկության ստեղծած ամենակարեւոր ինստիտուտներն Արեւելքում են ձեւավորվել: Անդեյի մշակութային ժառանգություն, քաղաքակրթային հսկայական հետքեր թողած Արեւելքից ինչու ենք ուզում ձերբազատվել: այս կերպ դադարում ենք մաքուր արեւելցի լինելուց, Եվրոպացի էլ չենք դառնում: Եվրոպան ինքն է թակարդն ընկել իր ազգի ստամոքսի պատճառով, որովհետեւ ամեն ինչ կուլ է տվել ու չի մարսել:

– *Իսկ որքանով են մյուս՝ Մաքսային միությանը ձգտողների ցանկություններն արդարացված, ի վերջո, այսօր մեր իսկ պատմության բազմաթիվ տխուր էջերի մեջ Ռուսաստանի մատը խառն է: Ցավոք, այս անակնկալ որոշումը մի տեսակ ժողովրդի թիկունքում կայացվեց... Ընդհանրապես, այս համատեքստում մերոնք որքանո՞վ են հաշվարկել մեր իսկ երկրի շահերն ու առաջնահերթությունները:*

– Ըստ իս, բոլորովին հաշվարկված չէ. ան-

կեղծ ասած՝ զարմացած եմ, որ մեզանում մի սովոր հաստատված ուղղակի քանի հարյուրամյակ արդեն չի ցանկանում վերլուծել, թե ինչն է մեզ ձգում դեպի Ռուսաստան, որն է մեր շահը՝ ստրուկի պես զուբհացված դեպի Ռուսաստան գնալը, թե՛ ազգային շահի հաշվարկը: Գուցե ինչ-որ փոքր խումբ նստել-հաշվարկել է, ընդ որում, առանց ժողովրդին նախապատրաստելու: Այս կարգի հսկա անակնկալ պետք չէ տարերային վիճակում գտնվող ժողովրդին, հասարակությանը մատուցել: Ընդ որում, երբ ասում եմ տարերային, գերլարված ժողովուրդ, հասարակություն, ուզում եմ նաեւ ավելացնել, որ սա միայն մեզ չէ, որ հատուկ է: Այս արմագեղոնի, կատակլիզմի սպասող ժողովուրդները ողջ աշխարհում են: Այո, ընկճախտի մթնոլորտ է իջել մարդկության վրա. Մարս թռչելը այդ հեղձուկից չէ: Ասում են չէ՛ երբ քնում է գիտակցությունը, արթնանում են իրեշները. երբ հասարակության գիտակցությունը չի մասնակցում այս գործընթացին, հաշվարկներին, թե ինչն է երկրի համար կարեւոր եւ ձեռնտու, նման անակնկալներն անպայման բացասական արձագանք են ունենում, քանզի ավելացնում են անորոշության չափաբաժինը: Դեպի Մաքսային միություն գնացողների 80 տոկոսը պարզապես հին սովորությանը Ռուսաստանի մեջ փրդկիչ է տեսնում, ոչ թե գործընկեր, ոչ թե արժանապատվորեն ասում է, դու հսկա Ռուսաստանն ես, բայց ես էլ հնամենի, իսկա տարբեր, քաղաքակիրթ ժողովուրդ եմ պատմություն ունեցող ազգ, որը թեպետ փոքրիկ, բայց արժեքավոր աղանձնող է: Մենք չենք կարողանում մեր աղանձնողները կայացնել, ասել, որ այստեղ բաներ կան, որ ուրիշ ոչ ոք այս տարածաշրջանում չի տիրապետում. հայկական գործոնը մենք չենք կարողանում հավոր պատշաճի մատուցել: Վրացիներն իրենց ջրիկ գինին ու ջրիկ մանդարինն ավելի թանկ են վաճառում, քան մենք մեր աղանձնողը: Այն աղանձնողը, որ կոչվում է հայկական գործոն: Այն աղանձնողը, որով մենք կարողացել ենք Ատլանտի նման Արեւելք-Արեւմուտք խաչաձերուկում երկնակամարը պահել մեզ վրա քրիստոնեական քաղաքակրթության պատվար լինելով:

– *Մուսուլմանական աշխարհն այսօր ավելի քան երբեք համախմբվում է, ասես սրբազան պատերազմի շնին ենք, իսկ ի՞նչ է անում քրիստոնեական աշխարհը:*

– Ցավալի բան պիտի ասեմ՝ հսկայածավալ քրիստոնեական աշխարհը երբեք մեր մեջքին կանգնած չի եղել, համերաշխություն երբեք չի եղել:

– *Մենք հիմա խոսում ենք դրսի աշխարհին մեր ունեցածը ներկայացնել չկարողանալուց, բայց արդյո՞ք մեր ներսում կարողանում ենք գնահատել լավը, տարանդակորն ու արժեքավորը: Իզուր չի, որ մեզանում հաճախ են հիշում ու կրկնում*



ՁՐՈՒՅՑ ՁԵՆՈՎ ԹՈՐՈՍԻ ՅԵՏ

նշանավոր գործիչների ու հերոսների հետ: Թորոսի մտային ուղևորությունը պատկերված է այս կերպ.

Հին դարերի քարուփոսով,
Ձնդայններով մամուկալված,
Գնա ց-գնաց սար ու ձորով,
Պատմահորը տեսավ հանկարծ...

Կամ՝

Ապա մեկ էլ գնաց Սասուն
Եվ հանդիպեց թորը Դավթին...

Դավիթն ասաց. - Թորոս, հանգիստ,
Իմ հայախոս երկրում երբեք
Չեմ ներելու ստահակին...

Պետք, որը իր տեսակի մեջ եզակի է, գրված է մի շնչով, անմիջական և հագեցված է այնպիսի ուսանելի դրույթներով, ինչպիսիք են հայրենասիրությունն ու աշխատասիրությունը, հավատարմությունը և այլն: Հատկապես արտակարգ հուզիչ է հայ-ռուսական բարեկամության դրվագը, երբ դրացի Իվանը գալիս է Թորոսի հետ ծանոթանալու.

Ապա եկավ Իվանն ուրախ,
Մի շիշ օղի ջեբից հանեց,
- Լինենք ծանոթ, ապրենք խաղաղ, -
Ու բաժակի օղին խմեց:
Մտերմացան հետև Իվանի,
Հետաքրքիր մարդ էր բարի,
Եվ միասին թեր-թերի
Աշխատեցին տասնյակ տարի:

Պետքի բոլոր նշանակալի գույները նկարագրողված են, լրացնում են բովանդակությունը և արժանանում ընթերցողի ուշադրությանը, անջնջելի տպավորություն թողնում նրա վրա:

Պետքում զգացմունքային տեսարանների կողքին տեղ է գտել մի զավեշտային դրվագ, որը հազիվ թե նմանն ունենա... Թորոսը նստած նվեր ստացած ավտոմեքենայի հետնամասին ոտքերը գետնի վրա, սողցում է մեքենան երկարությամբ, որ երկու կես անի, որպեսզի ստացվի երկու մտոցիկլ...
Կարդում ենք

Խզարն առավ, ասաց կտրեմ,
Մոտոցիկլ դարձնեմ երկու,
«Չապորոժեց» ու ն'նց նստեմ
Խոշոր ջանով իմ սահարկու:

Վերը մենք խոսեցինք պոեմի արժանիքների մասին, մինչդեռ հեղինակի համար ավելի օգտակար է իմանալ, թե ինչ թերություններ են թաքնված պոեմի էջերում:

Մեր համեստ կարծիքով պոեմի հիմնական թերությունը բանաստեղծի քաղաքական բնույթի միջամտություններն են, որոնք պարզապես թուլացնում են երկի օրգանական կապը: Ընդ որում բոլորն էլ հասցեագրված են պետության նախկին ղեկավարներին:

Ինչևէ, «Ձենով Թորոսը» պոեմը ընթերվում է մի շնչով: Ցանկանում եմ բանաստեղծ Սիրական Սևունու ստեղծագործական նորանոր հաջողություններ:

**Անդրանիկ ԲՄՅՐԳՅԱՆ,
ԽՍՀՄ գրողների Միության անդամ**

Սիրական ՍԵՎՈՒՆԻ

ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

Մի՛ սխալվիր, Հայաստան,
Ռուսաստանն է բարեկամ,
Քեզ թիկունք է անասան
Թշնամուդ դեմ մշտական:

Թող Եվրոպան իր համար
Գանձերի մեջ ուռճանա,
Բարիքները անհամար
Թեկուդ հեռվից քեզ ջանա:

Կյանքի փորձը քանի՛ դար
Դարձել է քեզ կոտ վկա,
Կապույտ երկինք, գառ կամար
Ռուսաստանը քեզ կտա:

Եվրոպական բիրտ բարքեր
Մի՛ թող խուժեն քո սուրբ տուն,
Ամուսնություն միասեռ
Խորթ է հավերժ քո հոգուն:

Ստեպների լիառատ
Բույրով լցվի քո հոգին,
Ռուսաստանն է հարազատ
Պատնեշի պես քո մեջքին:

Ռուսաստանը քո կողքին,
Երբ կանգնած է միշտ հզոր,
Կծածանես քո ձեռքին
Այ դրոշմը մեր բոսոր:

15 դեկտեմբերի, 2013 թ.
Լազարևսկ

Նարեկ ՍՄՅՍՅԱՆ

Հորս կողմը 1915 թ. Վասպուրական գավառի, Շատախ գավառակից են գաղթել: Միշտ հայրենիքի կորստի զգացում եմ ունեցել, բայց նաև վստահ եմ և կլինեմ, որ կորցրածը՝ վերադարձնելու եկեք:
Միրով, Ձեր հավանության եմ ներկայացնում:

Հայից խլել են երկիրն հայրենի...

Հայից խլել են
Երկիրն հայրենի,
Հանձարը ազգի,
Պատգամը մեծի,
Տաճարները սուրբ,
Որին նայելով,
Մերնդե սերունդ,
Ուժ է փոխանցվել՝
Փորձը մեծերի:
Փորձել են մորթել,
Ձրկել անցյալից,
Մի ողջ ժողովուրդ,
Մակայն ապարդյուն,
Հայը իր սրտում,
Փափագն է կրում,
Հույսով անկոտրում,
Որ վերջի վերջո,
Հայրենի հողին,
Տեր է կանգնելու:

Համշենահայ անվանի բանաստեղծ Սիրական Սևունին ընթերցողի արդարադատությանն է հանձնել իր «Ձենով Թորոսը» լիրո-էպիկական նոր պոեմը, որտեղ հանձինս Թորոսի լուսաբանում է օտար երկնքի տակ հայոց հորովել երգող գյուղացու հարափոփոխ կյանքի ելնեջները, նրա հոգսերն ու մտորումները, նկրտումներն ու աշխատանքային բուռն առօրեականը:

Պոեմի պոեմեն հետևյալն է.
Աբխազիայի լեռնային Լաթա գյուղում ապրում է Թորոս անունով մի հաղթանդամ մարդ, ում ձայնը այնքան հզոր է ու բարձր, որ մի գյուղից մյուսն է հասնում: Համագյուղացիները նրան անվանում են Ձենով Թորոս:
Բանաստեղծը Թորոսի գերմարդկային հատկանիշը բնութագրում է էպոսին հատուկ հիպերբոլիկ պատկերներով.

Երբ խոսում է Թորոսը մեր,
Խլանում է որոտն ամպի,
Ջարմանում են մանուկ ու ծեր,
Լույսն է հանգչում իրենց լամպի:

Թորոսը խորապես կապված է հարազատ գյուղին ու նրա մարդկանց, սակայն կյանքի դառնությունները ստիպում են նրան փախչել հարազատ վայրերից և հասնել ռուսական երկիր: Այստեղ նոր տուն ու տեղ է հիմնում և շարունակում իր երկրագործությունը ծխախոտ է մշակում ու թեյ հավաքում: Եվ կարճ ժամանակամիջոցում նրա աշխատանքային սխրանքների արձագանքը տարածվում է

Փառքը հասավ մինչև Մոսկով,
Ամբողջ երկրին դարձավ ճանաչ:


ապա

Պետությունը ռանչպար մարդուն
«Չապորոժեց» նվեր տվեց:

Բայց աշխատասիրությունը Թորոսի միակ մենաշնորհը չէ, նա բացառիկ ընթերցասեր անձնավորություն է նաև:

Բանաստեղծի մտահղացած պատմական բնույթի էքսկուրսներից պարզվում է, որ նա հայ պատմագրության երկրպագու է. հաճախ երևակայությամբ տեղափոխվում է պատմական անցյալ ու գրույցի նստում հայ

«Շատերը դուռս են ջարդում, որ դառնան իմ ասպիրանտը, սա հրաժարվում է»



Արժեքասպան օրերում շատ բան աննկատ է փնտրում մեր աչքից: Այնինչ, ազգային գիտության և մշակույթի նվիրյալները, մի կողմ թողած սոցիալական դժվարությունները, հնագույն մեր ծաղկողների ջանասիրությամբ շարունակում են կերտել մեր ներկա և վաղվա օրը: Այդ եզակիներից է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 85-ամյակը բոլորած պատկառելի գիտնական այր **ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՅԱՆԸ**:

– Պարոն Սկրտչյան, բազմաբովանդակ է Ձեր գիտական աշխարհը, այսօր կարծես թե բավարարվածության զգացողություն պիտի ունենայիք, բայց անհանգիստ եք:

– Հայերենի հնդեվրոպական լեզու լինելու հանգամանքը չարաշահվում է համեմատական լեզվաբանության ներկայացուցիչների կողմից, ինչպես և չանհանգստանամ: Հայերեն յուրաքանչյուր բառ բխեցնում են անպատճառ հնդեվրոպական արմատներից: Այս մոտեցումը ժամանակին մերժել են Նիկողայոս Ադոնցը, Նիկողայոս Մառը, Գրիգոր Ղափանցյանի նման խորագետ մասնագետները, նաև Ձեր խոնարհ ծառան: Իմ բազում հոդվածներն այժմ ամփոփված են շուրջ երկու հազար էջ կազմող գրքում, որը դեռ պիտի հրատարակվի: Այն վերնագրված է բավականին խոսուն «Հայերենի ոչ հնդեվրոպական բառապաշարը»:

– Այսինքն, կա հնդեվրոպական և ո՞չ հնդեվրոպական բառապաշար:

– Այո, ինչպես բոլոր լեզուները, հայերենն էլ ունի հարևան բազմաթիվ լեզուներից վերցված բառեր խեթերենից, հայասերենից, աքքադերենից, խուտերենից, ուրարտերենից, հունարենից, թուրքերենից, արաբերենից, այսինքն, սեմական լեզուներից:

– Որո՞նք են սեմական լեզուները:

– Ստորերենը, արաբերենը, աքքադերենը, բաբելերենը և ասուրերենը: Ժամանակի ընթացքում մենք բառեր ենք վերցրել ֆրանսերենից, անգլերենից և այլն: Ժամանակային իմաստով դա մի վիթխարի շրջան է երեք հազար տարուց ավելի:

– Սա բնական ընթացք է:

– Այո, ոչ մի լեզու առանց փոխառության չի կարող գոյատևել: Ժամանակին Ռուսաստան մուտք գործեցին հսկայական քանակությամբ տեխնիկական բառեր Հոլանդիայից՝ Պետրոս Մեծի ժամանակ:

– Ձեր հրատարակվելիք աշխատության բուն խնդիրը ներկայացրեք:

– Բուն նպատակն է՝ ճշտել փոխառությունների իսկական աղ-

բյուրները: Բայց ահա վերջերս լույս ընծայվեց հիմարությունների մի հավաքածու. բացի այն, որ ամեն բան հեղինակը բխեցնում է հնդեվրոպական լեզվախմբից, նաև արաբերեն, պարսկերեն և թուրքերեն բառերը հայերեն է համարում: Հեղինակը Վազգեն Համբարձումյանն է, գիրքը վերնագրված է «Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ»: Ի դեպ, նա ԳԱԱ թղթակից անդամ է: Եվ ահա ստուգաբանում է և ուսումնասիրում, հայերեն է համարում հետևյալը. «Հալս հալ չի», սակայն չէ՞ որ «հալը» արաբերեն բառ է: Հայերեն է համարում նաև էշխ-ը, որը թուրքերեն «սեր» է նշանակում, «բուղան», ըստ նրա, դարձյալ հայերեն է:

– Որքան տեղյակ եմ, բուղան թուրքերեն է և նշանակում է ցուլ:

– Տեղյակությունդ ճշմարիտ է, բուղան ցուլն է, ըստ հեղինակի՝ բուղը հայերեն է և դարձել է բուղա: Ինչևէ, հեղինակին, ով գիրքն ինձ էր ներկայացրել գրախոսության, ուղղակի ասացի, որ գիրքն իզուր է գրել:

– Գրատարակիչն ո՞վ է:

– ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը:

– Պարոն Սկրտչյան, փոխառված շատ բառերի ստուգաբանության շուրջ հաճախ են վիճաբանում, մասնավորապես, տարակարծությունների պատճառ է, ժողովրդական ուտեստի՝ քյաբաբի ծագումնաբանությունը:

– Արաբերեն բառ է, «քաբաբ» նշանակում է այրված, եփված կրակի վրա: «Լահմաջոն» ևս արաբերեն է, «լամ»-ը նշանակում է խմոր, «մաջո»-ն էլ միս, այսինքն մսախմոր:

– Այսինքն, Վազգեն Համբարձումյանի ամբողջ գիրքը նույն տրամաբանությամբ է գրված:

– Ցավոք, այո:

– Բայց նման պատասխանատու աշխատությունները սովորաբար գիտիտիրոջով են անցնում, ինչպե՞ս է այն սպրդել:

– Ոչ էլ կարողում են, խորամուխ լինում: Ո՞վ պետք է այդքան ժամանակ վատնի, վատնելու դեպքում էլ մի թե կհասկանան: Հայ լեզվաբանը պիտի տիրապետի լեզուների, գումարած ընդհանուր լեզվաբանության օրենքները, հարևան երկրների որ հնչյունը ինչ է դառնում և այլն:

– Կարծում եմ՝ կհամաձայնեք ինձ հետ, որ այս պարագայում անհատի խնդիրը չէ, այլ գիտական կազմակերպությունների, ԳԳ ԳԱԱ լեզվի ինստիտուտի խնդիրը: Սակայն հետադարձ հայացքով թերևս ծանոթանանք Ձեր անցած ուղուն, զուգահեռաբար ծանոթանանք հայ լեզվաբանության շուրջ տիրող մթնոլորտին:

– Երբ սովորում էի մանկավարժական ինստիտուտում, մեզ բարբառագիտություն էր դասավանդում նշանավոր Արարատ Ղարիբջյանը: Մի օր ապսպրեց հաջորդ օրը մեր պատերի և տատերի խոսքով գրված նյութեր ներկայացնեք, հեքիաթներ, անեկդոտներ իրենց բարբառով: Մայրս, Վերոնիկա Բերբերյանը, Կեսարիայի մոտ գտնվող գյուղից էր, անվանի ընտանիքից: Նա քաջ գիտեր և՛ հայերեն գրաբարը, և՛ թուրքերենը, և՛ ազգագրական բազում սովորություններն ու գրույցներ էր հիշում, առհասարակ փայլուն հիշողության տեր էր: Ու քանի որ մորս պապը եղել է քաղաքի Մեջլիսի անդամ, նրանց տանն են հյուրընկալվել բազմաթիվ թուրք և օտարազգի հյուրեր, սեղանը սպասարկում էր մայրս, տակավին ինը-տասը տարեկան մի աղջնակ, և նա բառացիորեն կլանում էր ականջի լսածը: Հաջորդ օրը բազում նյութեր դրվեցին Ղարիբջյանի սեղանին՝ Վանի, Արցախի և այլ բարբառներով: Մեկ օր անց նա լսարան մտավ և բացականչեց. «Այ տղա, դու գիտես, որ գյուտ ես արել: Աճառյանն իր բարբառագիտության գրքում ասում է, որ Եփրատից այն կողմ հայերեն չի հնչել, բոլորը թրքախոս են դարձել, դու հայերեն տեքոս ես բերել»: Հետո ասաց, որ իրեն տանեմ մորս և Կեսարիայից ներգաղթածների մոտ: Ես «Մոսկվիչ» մեքենա ունեի, հարգարժան դասախոսիս ուղեկցեցի Արմավիրի գյուղերը, Նոր Արեշ թաղամաս և այլուր: Եվ, խնդրեմ, Արարատ Ղարիբջյանը իմ հոդվածը տեղադրում է բարբառագիտության մասին իր աշխատությունում հետևյալ ձևով. «Ասաց Վերոնիկա Բերբերյանը, գրի առավ չորրորդ կուրսի ուսանող Ներսես Մկրտչյանը»: Դա էր իմ առաջին հայտը հայ բարբառագիտության մեջ:

– Մյուս հայտերն էլ, համոզված եմ, ոչ պակաս ուշագրավ են:

– Մի օր քաղաքում լուր սփռվեց, թե ուրարտական մի սայլ են թանգարանում ցուցադրում, Լճաշենի սայլն էր: Դիտեցինք ու երբ դուրս

եկանք, հրապարակի շատրվանների մոտ Արարատ Ղարիբյանին հանդիպեցինք, ով գրուցում էր մի քանի պատկառագրու ակադեմիկոսների հետ: Բարևեցի և հեռացա, մեկ էլ ձայն է տալիս, թե մտեցիր: Պարզվեց՝ վաղուց է ինձ փնտրում: Ասաց, որ ցանկանում է ինձ իր ասպիրանտուր դարձնել, քանի որ լավ գիտելի արևմտահայ, մասնավորապես, Բուրձանիայի բարբառները: Ամոթխած հրաժարվեցի, ուսուցչությամբ էի զբաղվում Նոր Արեշի դպրոցներից մեկում և շատ էի իմ աշխատանքից գոհ: Մեկ էլ բղավեց այս տղան հիմար է, շատերը դուռս են ջարդում, որ դառնան իմ ասպիրանտը, սա հրաժարվում է: Մի խոսքով, Լճաչենի սայլը բախտորոշ էր ինձ համար: Առաջին հանձնարարված թեման համընդգրկում էր. «Արևմտյան Անթալիայի չուսուցասիրված բարբառը»: Հետո թեկնածուական և դոկտորական թեզերի պաշտպանություն և բազում ուսուցասիրություններ, իրադարձություններ, դեպքեր և դեմքեր գիտության իմ ոչ այնքան հարթ ճանապարհին:

– Շրջայց կատարեց:

– Լենինգրադից երկու երիտասարդ վերադարձան, մեկն իմ աշխատասենյակում անցավ գործի, խեղագետ Վալերի Բաչատրյանը: Երբ նա սեպագրերը փռում էր սեղանին, ուղղակի խելքս գնում էր, ո՞նց եմ այս հրաշքներից անմասն մնացել: Սկսեցի խորանալ սեպագրագիտության մեջ, օրեր և ամիսներ շարունակ:

– Ձեր հետևորդները պահպանում են կապը գիտաշխարհի հետ:

– Հարցիդ մի պատմությամբ պատասխանեմ: Ուրարտերենի գծով կոնֆերանս էր Հայաստանում: Ժամանակ էին շատ նշանավոր քաղաքագետներ և սեպագրագետներ ողջ աշխարհից: Առաջարկեցի բանկետը կազմակերպել Գառնիում, ցույց տալու հյուրերին տաճարին կից բաղնիքի մակագրությունը «Աշխատեցինք ոչինչ չստանալով»: Ակադեմիայից ուղևորվեցինք Գառնի: Աղջիկս Հասմիկը, մեզ հետ էր, թևի տակ աքաղաղների այբբենարանը: Ասեմ, որ շատ գիտնականներ իրենց կանանց հետ էին ժամանել: Եվ ահա իտալացի ուրարտագետի կինը, Հասմիկիս տեսնելով, բացականչեց. «Բելա բամբինո, բելա բամբինո, եկ այստեղ»: Չարմացավ, գիրքը տեսնելով դատերս մոտ, և առաջարկեց կարդալ: Հասմիկս կարդաց և բավականին վարժ: Ամուսինը Մավլինին, գրուցում էր հանրաճանաչ գիտնական Դյակոնովի հետ: Չայն տվեց, ամուսինը մոտեցավ, լսեց աղջկա ընթերցանությունը և բացականչեց. «Օ, մարդնա միա»: Հետո ասաց, որ երբ հասնեն Բոսլիա և պատմեն, թե տասը տարեկան երեխան աքաղաղերեն է կարդում, չեն հավատա:

Հետո Մավլինին իր հարցազրույցներից մեկում ասել էր՝ զարմանալի երկիր է Հայաստանը, երեխաներն էլ են սեպագիր կարդում: Այս պատմությունն աշխարհով մեկ տարածվեց, անգամ Չուկոտկայից էին երեխաները նամակ գրում և խնդրում, որ Հասմիկը սեպագրերով իրենց անուրը գրի և ուղարկի:

– Շատ հետաքրքիր է, բայց լեզվական առնչությունների վերադառնալ:

– Միտով: Տպագրեցի մի հոդված խեթահայկական ընդհանրությունների շուրջ: Մինչ այդ հայտնի չէր, որ «բրուտը» խեթերեն է և նշանակում է կավ: Նման շատ բառեր կան: Բոսլիական «Օրինելայիս» («Արևելագիտություն») ամսագիրը տպագրում է սեպագրի մասին որևէ երկրում հրատարակված նյութեր: Ինձ էլ անդրադարձան: Եվ այսպես դարձա խեթագետ: Հետո անցա աքաղաղերենին, որը շումերենի շարունակությունն է: Ցավոք, մեր որոշ գիտնականներ երբեմն խորամուխ չեն լինում կնճռոտ հարցերում: Այսպես, նշանավոր գիտնական Ջահուկյանը մի աշխատություն ունի «Հայերենի օրինաչափություններից շեղվող բառեր»: Ես հիմնավորեցի, որ ոչ թե շեղված բառեր են, այլ աքաղաղերեն են չորս հարյուր բառ: Ժամանակին հոչակավոր հայագետ Հյուբշմանն է վրիպել. արաբերեն բառերը Հայաստան են եկել 640-ին, արաբների առաջին ներխուժման հետ: Ես հիմնավորեցի, որ դեռ դասական գրաբարում, ավելին, «Աստվածաշնչում» մինչ այդ կային բազմաթիվ արաբերեն բառեր, որոնք անցել էին հայերենին: Հոդված գրեցի. «Հյուբշմանի սխալները», տպագրվեց ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսում»: Այնուհետև հոդված գրեցի Հրաչյա Աճառյանի «Արմատական բառարանում» եղած սխալների մասին: «Պատմաբանասիրական հանդեսի» խմբագիրը, ինձ տեսնելով, բացականչեց. «Արա, հերիք է գիզանտների հետ քյալլա տաս»: Հետո նյութն ուղարկել էր Լենինգրադ և այլ գիտական կենտրոններ, հավանություն էին տվել և մի օր, ակադեմիայում հանդիպելով, ասաց. «Այ գիզանտների հետ քյալլա տվող, հոդվածդ տպելու եմ»: Եվ տպագրեց:

– Մեծարժո պարոն Սկրտչյան, հուսամ՝ էլի կհանդիպեց, քանզի Դուք դեռ շատ ասելիք ունեք: Այժմ սպասե՞ք մեկնասաների արձագանքներին, ովքեր կկամենան Ձեր աշխատությունը հրատարակել:

– Շնորհակալություն Ձեզ և «Իրատես de facto»-ին:


Չրույցը՝ Կրեժ ԱՌԱԵԼՅԱՆԻ

Տեղաբնի՞կ է, արդյոք, հայկական էթնոսը

Հասկանալի է, որ 14,5 հազարամյակ առաջ գետը Հրազդան անվանած լեզուն հայերենն է, իսկ այդ լեզուն կրողը՝ հայ ժողովուրդը: Հետպատերազմյան երկրաբանական ճշգրիտ տվյալների հիման վրա կառուցված այս փաստարկը հայերիս ծագումնաբանությունը տանում է անհիշելի ժամանակներ. բառ կա, որ աշխարհ արժե:

Կարճառոտ այս հոդվածում չի վիճարկվում, առավել ևս քննության չի առնվում հայկական էթնոսի տեղաբնիկ լինելու հարցը: Հոդվածում փաստարկվում է, որ հայկական էթնոսը դեռևս անհիշելի ժամանակներում տեղաբնիկ էր Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում, ապա և ողջ Հայկական լեռնաշխարհում: Արդեն իսկ վարկածային սույն դրվագների բացահայտման բանալին է Սևանա լճի երկրաբանական փոփոխության պարզաբանումը, ինչպես նաև Հրազդան գետանունը:

Ինչպես հայտնի է, Սևանա լիճն առաջացել է հրաբխային արտավիժուսների և լավային պատվարի գոյացման հետևանքով: Նրան շրջափակող Արեգունի, Սևանի, Վարդենիսի, Գեղամա և Փամբակի լեռնաշղթաներն աստիճանաբար բարձրացել են և ստացել ժամանակակից պատկերը: Երկրաբաններն այս հնագույն լիճն ու նրանից սկիզբ առնող Հրազդան գետը պայմանականորեն անվանում են նաև Պալեոսևան և Պալեո-



հրազդան, քանզի, ըստ էության, հենց նրանց տարածքում են առաջացել «նոր լիճ» ու «նոր գետ»:

Մինչև Արարատյան դաշտավայր հասնելը Հրազդանը հոսել և հոսում է տեկտոնական ձեղքվածքով, տեղ-տեղ 100 և ավելի մետր խորության հասնող կիրճով:

Ինչպես նշվեց, Սևանա լիճը պարփակված է հինգ հոծ լեռնաշղթաներով, որոնց պարագծում և ողջ ջրավազանում երկրաբանական չորրորդական շրջանից ի վեր ամենացածր գոգավորությունը բաժին է ընկնում Փամբակի և Գեղամա լեռնաշղթաների միջանկյալ հատվածին: Վերջինս ծածկվել է հրաբխային նորագույն ժայթքումների ու լավային գոյացումների գանգվածային շերտով՝ մոտավորապես 14,5 հազարամյակ

առաջ: Գոգավորության բարձրացման պատճառով, բնականաբար, բարձրացել է լճի մակարդակը, և նույն հատվածից սկիզբ առնող գետը վերստին հոսել է հին «պալեոհունով», քանի որ գոգավորությունը բարձրացումից հետո էլ մնացել է լճի ավազանի ամենացածր հատվածը:

Հենց այս ժամանակ սկսվում է այն իրողությունը, որից պետք է կառչի հայագիտությունը:


Ինչպես հայտնի է, գետն ունեցել է մի քանի անվանումներ, որոնցից առաջինն ու վերականգնված վերջինը Հրազդանն է:

Կարևոր ու խիստ հետաքրքրական է սույն ջրանվան ստուգաբանությունը, որի երեք բաղադրիչները պատմաերկրաբանական պատկերը ներկայացնում են ամբողջությամբ: Ստորև ներկայացվող այդ բաղադրիչները միանգամայն մեկնելի են ու հասկանալի հայերենով և հնդեվրոպական լեզուներով:

Եվ այսպես՝ Հրազդան...

Հուր – ըստ Աճառյանի, բնիկ հայերեն բառ է, որ ծագել է հնդեվրոպական նախալեզվի Պուրո-կրակ ձևից: Ցեղակից բառերն են հունարեն՝ Պիռ, լատիներեն՝ Ուռ, հին պարսկերեն՝ Հուռ, գերմաներեն՝ Ֆեուեր, հին ֆրանսերեն՝ Ֆեուր, քրդերեն՝ Ուր-

Մահաթմա Գանդի. 10 անգին խորհուրդներ



Իմ համակողմանի փորձն ինձ համոզել է, որ չկա ուրիշ Աստված ճշմարտությունից բացի: Ճշմարտության համընդհանուր և համազոտ ոգին հայցելու համար, հարկ է կարողանալ սիրել թշվառագույն մի արարածի՝ ինքն իրեն: Մարդը չի կարող իրեն թույլ տալ օտարվել կյանքի մի որևիցե ոլորտից: Ահա թե ինչու՝ իմ հավատարմությունը ճշմարտությանը հանգեցրեց ինձ քաղաքականության մարզին, և առանց նվազագույն տատանման ու դրա հետ մեկտեղ համակ խոնարհությամբ կարող եմ ասել, որ նա, ով կհաստատի, թե կրոնն ընդհանուր ոչինչ չունի քաղաքականության հետ, չգիտե, թե ինչ ասել է կրոն:

Mahatma-Gandhi 1. Փոխեք ինքներդ ձեզ: «Շրջակա աշխարհը փոխելու համար դուք պետք է փոխեք ձեզ»: Եթե դուք կարող եք փոխել ինքներդ ձեզ, ապա դուք կփոխեք ձեզ շրջապատող աշխարհը: Եթե դուք փոխեք ձեր մտքերը, ապա կփոխվեն ձեր զգացմունքներն ու արարքները: Եվ դրա շնորհիվ աշխարհը կփոխվի ձեր շուրջը: Բայց ոչ միայն այն պատճառով, որ դուք կդիտեք աշխարհը նոր զգացմունքներով, այլ որովհետև փոփոխությունները թույլ կտան անել այն, ինչ դուք չէիք անի (հնարավոր է նաև մտածել եք այդ մասին) առաջ՝ կառչելով հին մտածելակերպից:

2. Վերահսկեք ինքներդ ձեզ: «Առանց իմ համաձայնության ոչ ոք չի կարող ինձ վստահել»: Այն, ինչ դուք զգում եք և ինչպես եք արձագանքում, կախված է ձեզնից: Դուք կարող եք ինքներդ ընտրել

ինչ մտածել, ինչպես արձագանքել և ինչ զգալ համարյա ամեն պարագայում: Ձեզ անհրաժեշտ չի դուրս գալ հունից, տաքանալ, կամ բացասական վերաբերվել:

3. Ներք ուրիշներին և գնացեք առաջ: «Թույլերը ի վիճակի չեն ներելու. ներելու կարողությամբ օժտված են միայն ուժեղները: Առաջնորդվելով այքը այքին կանոնով՝ աշխարհի բոլոր մարդիկ կարող են կուրանալ»: Չի կարելի օգնել մեկին՝ պայքարելով չարի դեմ իր մեթոդներով:

4. Զեքերը ծալելով դուք ոչնչի չեք հասնի: «Մեփական փորձի մեկ գրամը ավելի թանկ է, քան ուրիշի մեկ տոննան»:

5. Հասկացեք, մեզնից ամեն մեկը մարդ է. «Ես ինձ համարում եմ հասարակ մարդ, ով ուրիշների նման է և ինչպես բոլոր մահկանացուները ունի սխալվելու իրավունք: Եվ միաժամանակ խոստովանում եմ, որ իմ մեջ կա բավականին շատ մարդկություն՝ ընդունելու իմ սխալները և հասկանալու դրանց պատճառները: Իմաստուն չէ համարել մեկին մյուսից խելացի: Միշտ պետք է հիշել, որ նույնիսկ ամենաուժեղ մարդը կարող է դառնալ թույլ, և ամենախելացին էլ սխալվել»:

6. Եղեք համար: «Սկզբում նրանք անտեսում են քեզ, հետո ծիծաղում են քո վրա, հետո կոպում են քեզ հետ, և այդ ամենից հետո դու հաղթում ես»: Եղեք համար, ժամանակի ընթացքում անախորժությունները կքջանան, իսկ հետո ընդհանրապես կանհետանան:

7. Չի՛լե՛ք, հումորը օգնում է դարձնել կյանքը ավելի թեթև, նույնիսկ ամենամանր պահին: «Եթե ես չունենայի հումորի զգացում, ես ինքնասպան կլիների շատ տարիներ առաջ»:

8. Փնտրեք մարդկանց մեջ բարին և օգնեք նրանց: «Ես աշխատում եմ տեսնել մարդկանց մեջ միայն լավը: Ես ինքս շատ անգամներ սայթաքել եմ կյանքում և հարկ չեմ համարում դատել ուրիշի արարքները: Ես ընդունում եմ, որ նախկինում մարդկանց քո հետևից տանելու կարողությունը կախված էր ուժից, բայց այսօր այն կախված է մարդկանց հետ համաձայնության գալուց»:

9. Եղեք ներդաշնակ: «Շրջանկությունը այն է, ինչ որ դուք խոսում եք, մտածում եք և անում եք իրար հետ ներդաշնակ: Միշտ ձգտեք հասնել ամբողջական ներդաշնակության (մտքերը, խոսքերը, արարքները): Ձգտեք մտածել անկեղծորեն, և այդ ժամանակ ամեն ինչ լավ կլինի»:

10. Շարունակեք աճել և զարգանալ: «Անընդհատ զարգանալը՝ դա կյանքի և մարդու օրենքն է»:

90

կրակ նշանակությամբ, և բոլորն էլ, հայերենի հետ համեմատած, առավել ուշ շրջանի կազմություններ են:

Ազ (Ազն) – ազգ, սերունդ, ցեղ, ծագում նշանակությամբ, օրինակ թագավորազն, արքայազն, իշխանազն, դյուցազն, երկազն, Հայկազն և հայկազն՝ հնդեվրոպական Չան-ժնեղ արմատից, որի ցեղակից բառերն են իրան. Չանա, հուն. Գենուս, լատ. Գենս, Գենուինտս – ծունդ, ծագում նշանակությամբ, դրանից էլ վրաց. փոխառությամբ Ազնավորի՝ Թամարա թագուհու արքունիքում ազնվական ծագումով հայ ազատանի կամ ազնվական նշանակությամբ:

Դան – ըստ գերմանացի նշանավոր լեզվաբան Մաքս Ֆաստերի, հնդեվրոպական նախալեզվում, վերո կամ դոն-գետ, ջուր, որից էլ Դոն գետանունը, նույնի հունարենը՝ Σανնայիս Հերոդոտոսի և Ստրաբոնի երկերում, զենդ Ավեստայի դանու-գետ, որից՝ Դանուր, Դունայ գետանունները հնդեվրոպական լեզուներում, օսերենում՝ դոն, դան (վերջինը՝ հյուսիսային բարբառով) – գետ, սանսկրիտ. Ուդա-գետ և այլն:

Մտացվում է, որ Հրազդան՝ Հուր-ազ(ն)-դան հիդրոնիմը նշանակում է հրից, իմա՝

հրաբխից ծագած ջուր կամ գետ: Անվանումը միանգամայն համապատասխանում է երկրաֆիզիկական անցյալ իրադարձություններին: Նման անվանումը կարող էր տալ միայն այն ժողովուրդը, որն ականատես էր եղել 14,5 հազարամյակ առաջ տեղի ունեցած հրաբխի ժայթքումին, իսկ այնուհետև՝ այդ նույն փակուղուց գետի նոր ելքին: Անշուշտ, երևույթն ունեցել է նաև աղետաբեր հետևանքներ, ինչի պատճառով այն դաջվել է տեղաբնիկ ժողովրդի հիշողության մեջ, ջրանվան միջոցով փոխանցվելով սերնդեսերունդ:

Հասկանալի է, որ 14,5 հազարամյակ առաջ գետը Հրազդան անվանած լեզուն հայերենն է, իսկ այդ լեզուն կրողը՝ հայ ժողովուրդը:

Հայ ժողովրդի տեղաբնիկության մասին վարուց ի վեր որևէ կասկած գոյություն չունի, քանզի ապացուցված իրողություն է, սակայն հետպատերազմյան երկրաբանական ճշգրիտ տվյալների հիման վրա կառուցված սույն փաստարկը հայերիս ծագումնաբանությունը տանում է անհիշելի ժամանակներ:

Բառ կա, որ աշխարհ արժե:

Արթուր ՆԱՎԱՍՏՐԴՅԱՆ

Պրոֆեսորին ասում էին՝ պրոֆեսոր, կռազի վարորդին՝ կռազի վարորդ

Օլիմպիադա 80-ին մենք առաջին կուրսի ուսանողներ էինք: Ռոմանտիկ դարաշրջան էր: Չնայած կյանքը հեղեղված էր Բրեժնևի մասին բարեհոգի անեկդոտներով, սակայն իրերը դեռևս կոչվում էին իրենց անուններով, պրոֆեսորին ասում էին պրոֆեսոր, կռազի վարորդին՝ կռազի վարորդ, գրպանահատին՝ համբալ: Մոսկովյան օլիմպիադան վերջին մեծ տոնախմբությունն էր Սովետ Միության կյանքում: Երկու տարի անց Բրեժնևը վախճանվեց, և Կրեմլի պատի տակ թաղեցին մի ողջ դարաշրջանի սոցիալական ապահովվածության և բարոյական պարզամտության մտացողների դարաշրջանը: Եկած նոր դարը շրջեց ամեն բան, պրոֆեսորները դարձան համբալներ, իսկ գրպանահատները պետական կարևորության գործիչներ:

Մտածում ես՝ այս մի Օլիմպիադան էլ հանկարծ չդառնա՞ նոր փոփոխությունների պերճ մունետիկ՝ ազդարարելու անգուլիս ձիավորների և փչովի իգիթների դարաշրջանի ավարտը:

Վարդես ՂԱՎԹՅԱՆ

Երբ Մտավորականությունը ՍՏԵՐՁ ՄԻՋՈՒԿ Է Պառնում զանգվածների և իշխանության մեջ

Մի փոքր անդրադարձ ազգիս ոչ թե իրական Մտավոր միջուկի, այլ անկախության տարիներից մեզ հասած «մտավորԱԿԱՆ-ության» վերաբերյալ...

Ցանկացած քաղաքակիրթ, հնագույն պատմություն ունեցող երկրներում, մտավորականությունը կազմում է Ազգի գենետիկը, և սա այն դեպքում, երբ վտանգված է մշակույթը, մտածելակերպը, զարգացման նպատակները... սակայն այն, ինչ մենք ունենք այսօր՝ բուրժուական «ինտելեգենցիայի», նաև է հիշեցնում...

Դեռ անկախությունից հետո, շատ «մտավոր անհատներ» իշխանության չինքնի տակ մտան, ընդհուպ կուսակցականացվեցին, այնքան, որ ձոնեցին նոր «երգեր» այդ կուսակցությունների մասին, մի մասը ներխուժեց չեզոք լրատվամիջոցներ, շոու-բիզնես՝ ասել է թե «իրացվեցին»... Իսկ առավել ազնիվները Տեր լինելով իրենց երկրին, հաղթանակեցին գոյապայքարի պատերազմում՝ նահատակվելով, կամ էլ ուղղակի գորշությանը կուլ չգնալու համար ուղղակի ընդհատակվեցին...

Այն, ինչը մնաց ու բուրժուացվեց, ուղղակի դադարեց վերնախավ լինելուց, դարձավ Ստերզ, Անպտուղ, Անկենդան՝ ասել է թե Չեզոք զանգված, որը թերևս առավել քան անընդունելի է...

Իրական մտավորականության շարքերը նորացան այն աստիճան, որ կենդանի մնացած Անհատներից շատերի ՄԱՆՆ անգամ դարձավ միօրինակ ընդունվող գույժ... առանց իրական կորստի չափը ընկալելու ու գիտակցելու...

Արդյունքում, այդ նորանախուս գուզընթաց, սկսվեց արատավոր մշակույթի ու մերօրյա թերարժեք մտավոր շերտերի վերարտադրու-

մը... ըստ էության, այն մի զանգված էր հիշեցնում, որի միտումը հիմնականում բնագոյներին, ոգու նսեմացման, առավել էժան հոգեվիճակին, առավել ևս հեղոնիզմին հասցնելու խնդիրն էր...

Այսօր մեր երկրում իրական մտավորականություն երևույթի առավել քան անհրաժեշտությունը կա՝ իսկ դա նույնն է թե կորել է ազգի միտքը, պատիվս ու խիղճը:

Այն ԻՐԱԿԱՆՈՒՄ ՇԱՄԱՍԵՆԻ ՉԵՁՈՔ ՄԻՋՈՒԿ Է դարձել զանգվածների և իշխանության մեջ:

Ամփոփելով նշեմ, որ ազգի գոյատևման, տեսակի մտածելակերպի գենետիկայի արդյունքում իրոք մեծ է ՄՍԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ երևույթի ԿԱՅԱՑՄԱՑ լինելը... դրա բացակայությունը, դիֆիցիտը, չեզոքությունն ուղղակի վտանգում է հանրության առողջ կենսագործունեությունը, քանի որ, արդյունքում հայտնվում են Տեսակին ԱՆՇԱՄՍԵՐԴԵԼԻ ՕՏԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐ, որոնք ոչ միայն կարճաժամկետ պատրանքի հաճույք են ապահովում, այլ նաև ուղղակի վտանգում են ԱԶԳԻ իմունային համակարգը...

ՉԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ. Հայ ազգը վաղուց է ապացուցել, որ գիտի գոյատևել ու նաև ԱՊԵՆԼ արժանավայել... սակայն, եկեք ամեն մեկս, ով պատասխանատվություն է զգում երկրի ու մեր տեսակային ազնիվ կողմի առջև՝ թույլ չտանք այլևս Գոյատևելու ու այլևս մեզ խեղելու ու կեղծ պատրանքներով հաճույք վերարտադրելու, որն առավել քան ուղին է ինքնասպանման...

Ապրել է պետք, նույնքան արժանի, ինչքան որ ԿԱՆՔ...
Լյուդմիլա ՄԻԼԱ

Դրբա լավը, բայց... վաղը

Ուու՛խ, ոնց է բախտս բերում, որ 1974 թ.-ից առաջ եմ ծնվել: Թե չէ՛ ես ցուրտ-բորանին հասնելու էի Ազգային ժողով, որ գոռայի «Ո՛չ կուտակայինի՛ն...»:

Բայց ախր ինչո՞ւ ոչ: Երբեք ունե՞մ է՞, երեխա ժամանակներս ձեռքներս ընկած կոպեկը բանկայի մեջ էինք օգու՞մ, ամիսներով կուտակում էինք, որ հեծանիվ ամենքը, բայց մի օր էլ պապան ու մաման հանում էին, թե՛ փող է պետք... Իշխանությունն ուզում է մեր մանկական հուշերն ամռոռաց պահել, դրանից լավ բա՞ն: Ուղղակի պարապ ենք մնացել, սկսել ենք միտինգ անել. «150 դրամին ոչ», «Գազի պայմանագրին ոչ», «Մաքսային միությանը՝ ոչ», «Փակ շուկային ոչ», «Զվարթնոց» օդանավակայանին ոչ», «Միասնականությանը՝ ոչ», «Գենդերին ոչ»... Ինչքան կուզես գոռա, 100 անգամ գոռա, 1000 անգամ գոռա, միլիոն անգամ գոռա: Քո միլիոնանոց «ոչ»-երին իրենք մի թաք «այո» են ասում ու պը՛րծ: Որովիետև դու քո «այո-ոչ»-ը ընտրությունների ժամանակ իրենք են տվել: Չես էլ տվել, բիրիկով ծախել ես: Իսկ գնված ապրանքը հետ չի վերադարձվում:

Են օրը մի միտինգավոր ասում է՝ մեզ էլի տեղ են դրել: Ասում եմ՝ այ՛ն ախպեր, սխալ բան մի խոսա, բա ինչո՞ւ եմ 2014-ը ձիու տարի հայտարարել: Ասում է՝ դիտմամբ եմ անում, որ հունվարի 1-ից պետպատվերով մեզ նայեն... Բողոքավոր է, սխալ բաներ է խոսում: Իսկ իմ կարծիքով՝ մեզ ոչ մի կենդանու տեղ էլ չեն դնում: Բնությունը դեռ այդպիսի կենդանի չի ստեղծել, որ մեզ հետ համեմատելի արագից լավ չվուն ենք, սով ու ծարավին ուղտից լավ ենք դիմանում, արջի պես մուշտակով փաթաթված քնում ենք, խոզի պես միայն մրթմրթում ենք, կովից

լավ կթվում ենք և տիրոջ նկատմամբ ավելի մեծ հավատարմություն ունենք, քան շունը:

Ոչ ոք թող չհամարձակվի մեզ էլի հետ համեմատել: Էջը բանող անասուն է, իսկ մենք գործազուրկ ենք:

Ազգային ժողով ունենք, աշխարհը չունի: Իսկը՝ սերիալ: Կեսից ավելին մեկը մեկի խնամին է, բայց տես, թե ամբիոնից ոնց են իրար հայհոյում: Բա ո՞նց, թողնեն ուրիշները հայհոյե՞մ, նրանք էլ պատվի տերն ե՞մ... Իսկ մե՞նք, Երբ տարի է գալիս, փոխանակ մտածենք, թե ում տուն գնանք՝ մի կուշտ փորով հաց ուտենք, ժողովրդին ապակողմնորոշում ենք՝ ոչ, ոչ, ոչ... Դեռ լավ է՛ էղ 31-ը կա, միացնում ես, ու կյանքը երջանի՛կ, լի՛, բո՛լ... Սեկ-մեկ էլ առողջապահական թեմայով են հաղորդումներ տալիս, ու պարզվում է, որ սոված մնալով կարելի է բոլոր հիվանդությունները բուժել:

Ամանորին մարդիկ միմյանց առողջություն են մաղթում, կարո՞ղ եք ասել ինչու: Որպեսզի բժիշկները գործազուրկ մնան: Նրանց հասնում է: Դնուց ի վեր հայտնի է՝ ատամնաբույժը, քիթ-կոկորդի մասնագետը երբ այցելուին ասում էին բաց, հիվանդը բերանն էր բացում, թերապետն ասում էր հանվի, շնչառությունը պիտի լսեր: Դիմա էլ են նույնն ասում, միայն այն տարբերությամբ, որ երբ ասում են բաց, դրամապանակը պիտի բացես, իսկ երբ ասում են հանվել, էնպես են սոկլորացնում, որ մորեներկ ես մնում...

Լավ, լավ: Նոր տարի է գալիս, եկեք լավ բաներից խոսենք: Օրինակ կուզե՞ք ձեզ մի անեկրտ պատմե՞մ, ուրախանա՞ք... Ուրեմն մի օր, հայկական խոզը գնում է աֆրիկական կոկորդիլոսի տուն, թե՛ ինձ լողալ մտկորեցրու, որ ես էլ արժանանամ մեր իշխանավորների սեղանի զարդը լինելու պատվին:



Կոկորդիլոսը պատասխանում է.
– Այ ընկեր, լողալը հե՛ջ, դու սողալ սովորի...
Էդ ինչի՞ չեք ծիծաղում... Դե լավ, մի ուրիշը պատմե՛մ: Մի օր մի էլ մեկ ուրիշ էլի ասում է.
– Լսիր, էն մեր Գազանական ժողովի դեպուտատը քո հորեղբոր տղեն չի՞:
– Դա:
– Բա ինչու ա առյուծի պես քայլում:
– Ես ի՞նչ իմանամ, նա էլ էղ ձևով ա իշություն ամում:

Էլի չծիծաղեցիք: Բա ո՞նց անեմ, որ ձեզ մի քիչ զվարճացնեմ: Գտա, փորձված մեթոդ է. 2014-ին, ամեն օր, բաց չթողնեք, հա՛, ամեն Աստծո օր, մեր կառավարության հետ կրկնեք.
– Եսօր վատ է, վաղը լավ է լինելու...

Ես բուրժ եմ, դրա համար էլ միշտ վերևում եմ գտնվում՝ ինչ հասարակարգ էլ լինի. սեղանապետ են ընտրում

«Մեր սեղանից Ձեր սեղանին»

Կեստադրական նշանները Նոր տարվա ճոխ սեղանին.
 - Եկեք նախ սեղանապետ ընտրենք, - բազմության միջից առաջարկեց բազմակետը:
 - Առաջարկում եմ բուրժին, - բացականչեց բացականչականը:
 - Բացականչականին, - շեշտեց շեշտը:
 - Շեշտին, - բուրժ-բուրժ ասաց բուրժը:
 - Ապաթարցին, - ոտքը կախ գցեց կախման կետը:
 - Ապաթարցը հարմար չէ, նա սփյուռքահայ է, հին արևմտահայ ուղղագրության ներկայացուցիչ, նա թող իր սփյուռքում թամադա լինի, - ստորաբար առարկեց ստորակետը:
 - Տղեք, ոնց եք վեր կենամ ու բողբոջ մեկ-մեկ գիրկս առնեմ, փչացնեմ, դնեմ մի կողմ: Առանց ինձ ի՞նչ սեղանապետ, ի՞նչ պաշտոնյա, - ներքինիի պես ծվաց չակերտը, ու բոլորը իրենց հարձ գզացին մի պահ:
 - Լավ, չակերտն էլ թող պարի գծով լինի, այսինքն՝ մշակույթի պատասխանատուն լինի, - գործը դրստեց կախման կետը, - ում ուզի կզրկի, ում ուզի՝ կթողի:
 - Տղերք, մի բան ասեմ, բայց չնեղանաք, ես բուրժ եմ, դրա համար էլ միշտ վերևում եմ գտնվում՝ ինչ հասարակարգ էլ լինի: Այնպես որ ես համաձայն եմ:
 - Ճիշտ է, ես բուրժ չեմ, փոխարենը՝ դժոժան եմ, բացականչելու համար մի հատ եմ, ու ես էլ եմ միշտ վերևում, այնպես որ ինձ ընտրեք:
 - Մի բուրժ, մի բուրժ: Կարող է ես վերևում չեմ, ես եմ շեշտում ու

ընդգծում իմ բուրժ ու դժոժան ընկերների արածն ու չարածը: Առանց շեշտի ի՞նչ սեղանապետ:
 - Ճիշտ է, - միջակությունների միջից համաձայնեց միջակետը,
 - եկեք բուրժին սեղանապետ ընտրենք, իսկ շեշտին ու բացականչականին տեղակայենք:
 - Ճիշտ է, - համաձայնեց փակագիծը ու բացեց իրեն, - ինչ էլ ուզում է լինի, մեկ է՝ վերևում լինելու համար պիտի լինես շեշտված բուրժ ու դժոժան: Իսկ սրանք միշտ էլ վերևում են ու վերևում:
 - Բայց սրանք առանց մեզ ի՞նչ պիտի անեն. եթե ստորություն է պետք անել, ինձ են դիմում՝ ստորակետիս: Ընդունելության քննությունից կտրելուց մինչև մարդուն կախաղան հանելը իմ միջոցով է արվում:
 - Սրանք հենց բան չեն ունենում ասելու, ինձ են մեջտեղ բերում, որպես բազմության ձայն, - ինքն իրեն խոսում էր բազմակետը:
 - Սրանք վերևում չէին լինի, եթե ես չլինեի, ես կուսակցական նշան եմ՝ ինչի վրա դնես բաժանում եմ, կխում եմ, տրոհում եմ, մասնատում եմ. կետը էս կողմն եմ գցում, կետը տանում եմ մյուս կողմ, մի խոսքով, ում ուզում եմ, տողադարձ եմ անում:
 - Բա ես ի՞նչ ասեմ. ինչ հիմարություն ուզում՝ անում են, ինչ հիմարություն ասես՝ գրում են, վերջում ինձ են կանչում, թե՛ դուրը փակի, վերջակետ դիր, նորից ենք սկսելու, - եզրափակեց վերջակետը:

Վաչագան ՍԱՐԳՍՅԱՆ, գրող, «Գրող հրաշալիք» շաբաթաթերթի հիմնադիր ու գլխավոր խմբագիր

ԾՈՎԻՑ ԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՆ, ԹԵ՞ ՕՎԿԻՎՆՈՍԻՑ ՕՎԿԻՎՆՈՍ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Հարցականի հայեցի ականջները՝ ականոթսի հատկությունն ձեռք բերած, արձագանքում են միայն հասկանալիին: Թեպետ Լոս Անջելեսը լեզվախառնարան է, իսպաներենը իր տակն է առել Բրոդվեյը: Եվ ոչ միայն փողոցն է խոսում, այլև սփռվում է մեքսիկական երգը և ահագին երկնաքերեր, ոչինչ անել չեն կարող իրենց անգլոսաքսոն հզորությամբ: Թվում է, ահա, ուր որ է, իսպաներենը պիտի ձայն տա վերին հարկերից, իսպաներենի արանքում, գոնե Բրոդվեյում, անգլերենն է այլք տալիս... Չինարենն է տեղատվության ու մակընթացության մեջ... Ու այս լեզվախառնարանում երբեմն-երբեմն հայերենի փափսուքն է Հարցականի լսողությանը հասնում. մի տեղ՝ փոքր-ինչ բարձր, մի տեղ՝ որբավարի...

Արևմտահայերենն ու պարսկահայի երկարաձգվող ձայնավորը, բաբվեցու ռուսերենը, և, վերջապես, երևանցու խոսքը... Հայաստանցու խոսքը, պարտադրված անգլերենի կողքին հայերենը նրա տնավարի գրույցն է, հոգու հանգիստը: Բայց խոսողների քայքայը երկչոտ չէ... Երևանի «խառնջ» տղերքն են, որ Հայաստանի պատանն են բերել Բրոդվեյ: Ամեն ինչից երևում է, որ նրանցից և ոչ մեկը հոմլեզ չի դառնալու, մուրացկանություն չի անելու: Կարելի է կանխատեսել, որ նրանցից ոմանք մեծ բիզնեսով կզբաղվեն, կմտնեն քաղաքականության ոլորտը, որտեղ աշխարհի բախտն է ուղղություն ստանում, որի մեջ է իրենց հայրենիքը, ավելի հասարակ՝ ծննդավայրը և չեն մոռանա նրա մասին:

Նոր հայաստանցիների ճամփան ավելի կարճ է, քան առաջին գաղթականների, որոնք փախչում էին օսմանյան սրից, և երկար ժամանակ էր պետք, որ դուրս գային իրենց արյունոտ շապկի միջից, կազմեին համայնք և հավաքվեին եկեղեցու շուրջը: Նորերը 88-ի շունչն են կրում: Սկիզբն ուրիշ է, ժամանակը՝ ուրիշ: Ճամփան՝ մի այլ բանի համար: Նրանք գալիս էին նվաճված քաղաքակրթության կենտրոնը, և նրանց փախստական անվանելը մեղք է: Նրանք ինչ-որ բանով նման էին Ամերիկայի առաջին պիոներներին, որոնք ոսկու և ազատության համար էին գալիս, իսկ մերոնք, ավաղ, թերևս՝ բարեկեցության: Երևույթը բնական է, հասկանալի: Ճապոնացին է այստեղ գալիս, և՛ գերմանացին, և՛ ֆրանսիացին: Եվ ազգային

ամբիոնից դատափետելը կենսահաստատ բանականությունից դուրս է: Բիարկե, եթե չլինեք մի հանգամանք: Այդ հանգամանքի մասին երկմտանքը ես՝ Հարցականս, կառաջաբանեմ մի, ինձ համար բանաձևանման մտքով: Հրեան քանդվում է արտաքնապես՝ ներսում պահպանելով իր անիմանալի ազգային խորհուրդը, հայը՝ պահպանելով իր արտաքինը, քանդվում է ներսից: Իսկ ներսում գտնվում է իր նախագոյր, որը իր պապերն են և իր երեխաները, թոռներն ու ծոռները, մեծ հաշվով՝ իսկական ինքը: Եվ միայն ՄԵԾ ՄԱՐՄՆՈՎ կարելի է մտնել նեղ դռան անվերջանալիություն: Լոս Անջելեսը, այս աղմկոտ փողոցները, այս առարկայական լիությունը ևս կվերջանան, երկնքի չափերով՝ շատ շուտ, և պետք կլինի այստեղից ևս մեկնել լուսի տիրույթ...

Բրոդվեյի ոսկերչական խանութների փայլի տակ մեծ մասամբ հայեր են: Հուսով եմ, որ ամառնան կույ չի տա նրանց: Քանզի գերեզմանը, միննույն է, փայլ չունի, և Աստծո մոտ ասելի անցքով անցնելու հարկ չի լինի:

Հայությունը տակավին պահպանած հայերը և, հատկապես, նոր հայաստանցիները դեռ երկար ժամանակ պիտի կարոտախոսից տառապեն, բնական է... Նրանց մի բան է ժամում՝ դեպի Հայաստան ճանապարհը (ես չեմ հանդգնում ասել անիրական բառը՝ վերադարձ) հեշտ լինի և Հայաստան ասելու և կարոտելու փոխարեն հայություն ասեն և կարոտեն իրար: Ահա այստեղ է, որ ես ինձ միայնաբար եմ սպազայի հարցով և ինքս ինձ, մի քիչ խեղճացած, մի քիչ ուտոպիայով տարված, նեղ վիճակից դուրս պրծնելու ճիգերով երկբայում եմ՝ «Օտվից ծով Հայաստան և, թե՛ օվկիանոսից օվկիանոս Հայություն ն»: Եվ ձեզ եմ ներկայացնում այս լավատեսական երկմտանքը, քանզի ուրիշ ելք չունեմ, ես՝ ոչ քաղաքական գործիչս, Հարցականս, որ իմ նախնիներից շատերի նման, հայկական տառապանքի ծուղակն եմ ընկել և միջոցներ եմ փնտրում դուրս պրծնելու համար: Եվ որ այսօր հետապնդում եմ պարանոյա դարձած ցանկությունս, քանզի դա է միայն ժամում իմ ուտոպիայի համար. հայը չպետք է քանդվի իր ներսում:

«Ես ունեմ հայրենիք, բայց չունեմ պետություն»

Հայաստանում բիզնեսը, տունը կորցրած Հրայան, որն այժմ բնակվում է Ֆրանսիայում, կվերադառնա հայրենիք, եթե մարդիկ օրենքով պաշտպանված լինեն: «Մեր, էս քայրթու մտածելակերպով պետություն չենք դառնա: Այ, օրինակ այսօր ծխախոտի մաքուրը երբ գցեցի եւ աղբամանը չընկավ, կոացա եւ վերցրի, այնտեղ կանգնած մարդիկ քմիծաղ տվեցին, եւ ես դրանից կոմպլեքսավորվեցի, ինչը որ Եվրոպայում չկա: Այնտեղ երբեք քեզ վրա չեն ծիծաղում, որովհետեւ նրանք սիրում են իրենց պետությունը: Հայաստանից հեռանալուցս 12 տարիների ընթացքում ավելի վատ փոփոխություններ են եղել ինչպե՞ս վերադառնալ: Հայաստանում եթե լինի հավասարություն, որ ես ինձ հավասար զգամ ու տեսնեմ օրենքի գերակայությունը կվերադառնամ, անշուշտ կվերադառնամ», - «Առավոտի» հետ զրույցում ասում է Հրայան: Նա Հայաստանից հեռացել է 32 տարեկանում, այժմ Հրայան 44 տարեկան է: 12 տարի ապրում է Եվրոպայում: Մեկնել է Գերմանիա, ապա տեղափոխվել Ֆրանսիա: Արտագաղթելու որոշում կայացրել է, երբ սեփական փորձով համոզվել է հայն իր հայրենիքում պաշտպանված չէ: «Երբեք մտքովս չէր անցնում հեռանալ հայրենիքից, ունեի փոքրիկ բիզնես, որով եւ սպասեցի որ ընտանիքիս քիչ թե շատ բարվոք կյանքը: Երբ պահը եկավ բիզնեսն մեծացնելու թիկունքից հարվածողները շատացան: Դե, մենք հայերով համար ու չկամեցող բնավորություն ունենք, որի պատճառով չենք նկատում մեր կողքին ապրող այն մարդկանց, որոնք տարիներ հետո դառնալու են բոլորիս պարծանքը: Մինչև այդ մարդը կյանքից կամ երկրից չի հեռանում, չենք ափսոսում ու չենք արժեւորում նրան: Թող տպավորություն չստեղծվի, թե ինձ եմ գովում. շատերս ենք տեսնում, թե, բացի աշխատող ուժից, ինչ քանակությամբ արվեստագետներ են հիասթափված գնում Հայաստանից: Շատերի պես ինձ էլ թույլ չտվեցին գոյություն իմաստը գտնել իմ երկրում: Ես ոչ թե հիասթափված էի, այլ զայրացած. գործս իմ գլխին դարձավ փորձանք, ու անգամ տունս կորցրեցի, բայց նույնիսկ այդ դեպքում էլ չկարողացա օրենքով պաշտպանել ինձ: Ամեն ինչ նորից սկսելու հույսով գնացի երկրից», - պատմում է Հրայան: Ոչ օրինական ճանապարհով Հայաստանից մեկնած հայ միգրանտի համար արտերկրում էլ հեշտ չի եղել. մեծ դժվարություններ էր միջով է անցել, մինչև որ ոտքի է կանգնել, սակայն, ինչպես Հրայան է

պատմում, ոչ մի անգամ չի նվաստացվել, միշտ օրենքով պաշտպանված է եղել անկախ կարգավիճակից: Հրայանի պատմելով Գերմանիայում ապրել է ճամբարում՝ առանց կեցության վկայականի: «Չիմանալով այդ երկրի լեզուն, անգամ վարք ու բարքերը անում էի ամենատարբեր աշխատանքներ, միայն թե հետ չգայի: Աշխատում էի ու չէի ամաչում իմ աշխատանքից, քանի որ այդ երկրում մարդիկ հարգանքով են վերաբերվում աշխատող մարդուն, եւ կապ չունի, թե ինչ ես աշխատում: Բնձ հետ հավասար աշխատել եւ երբեք չեն նվաստացրել այն գործատուները, որոնց մոտ աշխատել եմ: Ի դեպ, այդ մարդիկ ավելի հարուստ են, քան այստեղի թվացյալ հարուստները», - ասում է Հրայան: Գերմանիայից Ֆրանսիա տեղափոխվելուց հետո Հրայան տեղափոխում է նաեւ ընտանիքին եւ մինչ օրս բնակվում այնտեղ: Ճիշտ է, կարոտը խեղդում է, բայց Հրայան չի ուզում հայրենիք վերադառնալ, մի տեսակ սովորել է ապրել օրենքի երկրում: Տարբեր գործեր անելուց հետո Հրայան ներկայումս Ֆրանսիայում ավտոմեքենաների առքուվաճառքի փոքրիկ բիզնես ունի, ազատ ժամանակ էլ սալիկապատման աշխատանքներ է կատարում: 2007 թվականից Ֆրանսիայում ստացել է կեցության վկայական եւ ներկայումս աշխատանքներ է տանում այդ երկրի քաղաքացիություն ստանալու ուղղությամբ: «Եվրոպացին գնահատում է աշխատող, կարգապահ մարդուն», - ասում է Հրայան. «Շուտով կդառնամ այդ երկրի քաղաքացի եւ, ինչպես իմ շատ հայրենակիցներ, կապրեմ հայրենիքիցս հեռու: Ես ունեմ հայրենիք, բայց չունեմ պետություն: Ես էլ միացել եմ այն բազմաթիվ մարդկանց, որոնք կարեւոր չէ ուր եւ ինչի համար են գնում. փաստն այն է, որ գնում են իրենց հետ տանելով հայ մտածողին, կառուցողին, արվեստագետին, ի վերջո այն երիտասարդին, ով պետք է շարունակի ապրել ու շենացնել երկիրը: Ապրելով Եվրոպայում եւ միանգամայն ընդունելի համարելով քաղաքակիրթ բարքերը Հրայան գտնում է, որ Հայաստանը պետք է գնա դեպի Մաքսային միություն, քանի որ նրա համոզմամբ՝ Ղարաբաղյան խնդրով Հայաստանը Եվրոպային պետք չէ, եւ որ ավելի լավ է մի միության լիարժեք անդամ լինել, քան տարիներով հերթ կանգնել եւ այդպես էլ չընդգրկվել եվրաընտանիք»:


Անուշ ՄԱԹՎՈՍՅԱՆ, «Առավոտ» օրաթերթ

ՅԵՌԱՅՈՂ ԺՈՂՈՎՐԴԻ ՅԱՅՐԵՆԻՔԸ

Հիշում եմ մորս՝ գյուղում: Տան պատի տակ նստած, միայնակ, աչքը՝ ճամփին: Մի բուռ կին էր, մի քիչ հիվանդ, հորս մահից հետո՝ մարմրող մոմի լույս: Մենակ էր իր հուշերի, վաղուց մահացած մեթափորների ու մտերիմների ծնած դատարկության, մեր անփութության ու իր անսահման սիրո հետ: «Էկա ր, տղա ջան», - իր աշխարհից դուրս էր գալիս ու մեղավոր ժպտում ինձ, թե ես էի մեղավորը, ես էի անվերջ հեռացողը և օրերս առանց իրեն ապրելու ինձ դատապարտողը: Հիմա անսահման տխուր եմ, երբ հիշում եմ, թե ինչպես հերթական անգամ դավաճանում էի իրեն, հեռանում իրենից, գնում երիտասարդական մի աշխարհ, որտեղ ինքը չկար: Գնում էի ու իրեն մոռանում կամ ինձ համոզում, թե մոռացել եմ: Հիշում եմ նրա հայացքը, որ սիրով ասում էր՝ ե՛րբ ես մեկ էլ գալու: Խեղճ ու կրակ մերս, համով-հոտով մերս, սիրո ծով մերս: Չէի խրատվում, տարին տարվա վրա չէի խելոքանում, խույս էի տալիս ինքս ինձնից ու առավելապես իրենից, չգիտեի, որ քիչ է մնացել նրա երկրային կյանքին, քիչ է մնացել ամենաանկեղծ մարդուն:

Սիրտս լցվում է, բառերը դադարակ, սնապարծ բաներ են թվում: Ինչքան և հույս կար ամեն հանդիպման ժամանակ նրա խաժ աչքերում, որ ես անընդհատ կտրում էի, մինչև կտրվեց նրա կյանքի թելը:

Ների ր, մերո ջան: Դու ինձ լավ գիտեիր, ես քեզ չգիտեի, դու ինձ նվիրված էիր, ես՝



ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ. «Շենքի մոտ»

բնավ, դու ինձ սիրում էիր, ես քեզ սիրում եմ հիմա, անսահման: Դու ինձ կարոտում էիր, մշուշոտ հայացքով ինձ քաշում էիր, տուն բերում, հետս զրուցում, գուրգուրում, իսկ ես հեռու էի: Հիմա ես կարոտում եմ քեզ քո կարոտով, քեզ հայացքով քաշում-բերում եմ ինձ մոտ, հետդ զրուցում, տխրում ու փլվում իմ ներսում:

Այսօր տեսնում եմ Հայրենիքից հեռացող իմ ընկերներին, բարեկամներին, երեխաներին ու թոռներին: Հեռանում են, այսօր մեր Հայրենիքը դարձել է հեռացող ժողովրդի հայրենիք: Այսօր ես իմ մայրն եմ՝ խեղճացած, այսօր ես իմ հայրենիքն եմ, որից

հեռանում եմ, ու ես հարցնում եմ՝ ե՛րբ եք նորից գալու, ու մեղավոր ժպտում եմ ինձնից հեռացողներին, ներում եմ նրանց ու չեմ ներում ինձ, որ հեռանում եմ:

Ես կարոտում եմ, մեռնում եմ հուշերի աշխարհում, դատարկվող հայրենիքի երկինքը ավազի նման տորում է ներքև:

Ների ր ինձ, մա՛յր իմ:


Վաչագան Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Սամվել ԽԱՆՈՅԱՆ

ՎԱՎԵՐԱԴԱՏՈՒՄ

- Մա ի՛նչ կյանք ա... էլ հնար չկա, ես էլ եմ գնալու...

- Վազգեն, էն շանը հետդ տար, մեղք անասունը...



Սամվել ԽԱՆԱԹՅԱՆ

ՆԱՄԱԿ ԶԾՆՎԱԾՆԵՐԻՆ

Դուք, որ կծնվեք և կգաք աշխարհ՝ որպես մունետիկ նորօրյա օրվա, դուք, որ կըմբռնեք, թե ո՞վ էք եղել, և ի՞նչ է կյանքը ձեզ համար հիմա, երբ ձեր արյան մեջ, ձեր երակներում կտանջի ցավը նախնյաց դարավոր, և կգիտակցեք, թե ի՞նչ երկիր ենք ձեզ համար թողել պա՛նձ ու... ահավոր, և երբ կանհիծեք ձեր բախտը դժնի պապակ շուրթերով ցամքած ակունքի չոր քարին նստած, - չերկնչեք հանկարծ և չկարկամեք՝ մեզ էլ անհիծել, ձեր նախնիներին, որ Հայրենիքի սերը դարձրած ծածանվող դրոշ, խոնարհեցին այն, ոտնատակ գցին ճահճից դուրս ելած մի բուռ ամբոխի:

Եթե չանհիծեք - մեր հոգիները չեն գնա դժոխք, և Տիեզերքում չի վերականգնվի արդարությունը:

Մեր կույր, միամիտ, խեղճ ինքնությունը, մեր հավատավոր և անմեղսունակ անձարությունը, թախանձը լալկան, մուրդությունը, մեր ծոցից ելած իժերին ծոցում ջերմ փայփայելու վախկոտությունը, սին պարծանք դարձրած համբերությունը, և պատրանք դարձրած ծով- բարությունը, ինքնախաբկանքի արմատը ջրած իմաստությունը... Անհիծե՛ք առանց մի երկմտանքի:

Եթե չանհիծեք - մեր հոգիները չեն գնա դժոխք, և Տիեզերքում չի վերականգնվի արդարությունը:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Գոհանա՛մ Աստծուց:
Ինձ շատ է տվել,
և այդ շատի մեջ
շատուշատն, անշուշտ,
դու ես միշտ եղել,
ինձ համար շա՛տ-շատ,
ինձ միշտ պակասող,
իմ մշտաշատ սեր:

Իմ շատուշատից քիչումիչ տարել,
իրենցով արել,
պարզել են ի տես,
թե՛ տեսե՛ք, մենք էլ շատուշատ ունենք:

Իմ շատուշատի վրա զարմացել,
շատ հաճախ նույնիսկ չեմ գնահատել
հույժ արժանապես,
և ըստ արժանվյունի,
սոսկ զարմացել եմ,
մի քիչ կասկածել,
որ ի՞նչ է, իմը տրված ի վերուստ
խենթ ու խելառիս
ու թռի-վռի թրև եկողիս,
որ իր արևին
արդարացումի
բան է հնարել,
թե՛ ամենուրեք,
և այն ու ամեն, և՛ ամենայնի՛վ,
շա՛տ է կարոտում իր շատուշատին...

Մինչդեռ չես կարող
արևը վերցնել ու պահել

նավթի լամպի ապակում,
աստղերը համրել խիստ այժմեական
հաշվիչով անգամ,
երբ ճիշտը, որպես հրաբորբ արև՝
բարկ անապատում,
տեր-տիրակայն է դառնում
քո ապրած օրերին կարկամ...

Ա՛խ, իմ շատուշատ,
քո առջև գուցե
մեղա չեմ գալիս,
սակայն չեմ կարող Մեծ Ճշտի դիմաց
չծնկել խոնարհ սպաշխարելով,
փառաբանելով.

- Գոհանա՛մ Աստծուց:
Ինձ շատ է տվել,
և այդ շատի մեջ
շատուշատն, անշուշտ,
դու ես միշտ եղել,
ինձ համար շա՛տ-շատ,
ինձ միշտ պակասող,
իմ մշտաշատ սեր:



«Ի սկզբանե եր...» գործ՝ Եվա Ղևոզյանի

- Ասեք ինձ, կապտաչ, անուշիկ ջրեր,
իմ մահից հետո
խոխոջալու՝ եք դուք այդքան բարձր:
- Է՛լ ավելի զիլ, ավելի քաղցր...

- Ասեք ինձ, ազատ ու արձակ հովեր,
դուք, ինձնից հետո,
թափառելու՝ եք այդպես երգելով:
- Ավելի մեղմի՛կ, անու՛շ երգերով...

- Ծաղիկներ, պես-պես գույն ու բույրերով,
դուք, ինձնից հետո,
կծաղկե՛ք դարձյալ այսքա՛ն հմայիչ:
- Է՛լ ավելի վառ, ավելի թովիչ...
- Արև կենսատու, ամենայն սկիզբ,
ինձանից հետո,
մի թե չես մարի խավար անդունդում:
- Անմար եմ, հավերժ՝ լուսեղեն երթում...

- Անուշիկ ջրեր,
ծաղիկներ քնքույշ,
հովեր՝ անդադրուն և թափառական,
և դու՛ արևո, հա՛ր-հավերժական,
արդյոք, չգիտե՛ք,
իմ մահից հետո ու՛ր եմ գնալու:
- Մեզ մոտ ես գալու, մեզ հետ ես գալու...

16.01.2014 թ.

ԼԵՆ ԿԱՍՍԱՐ

ԾՐԱԳՐՎԱԾ ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ

Այսօր խոսակիցս սաստիկ կզարմանար, որ ասանկ աղքատ երկրի մը մեջ, ուր անգործություն միայն կա, ավազակություն չի պատահեր:

- Հանգի՛ ստ եղիր, - ըսի, - այդ դերը պետությունն է վերցուցեր իր վրան ու կտանե ավելի ծրագրված, քան ավազակը:

Մեր դատավորները փոքր գողեր կարող են բռնել. մեծերից վախենում են: Հիշում եմ, երբ հեռավոր քարտում ինձ նշանակեցին ցո-

րենի պահեստին պահակ, աչքովս տեսնում էի, որ ամբարը դատարկում էին ոչ թե սովորական մկներ, այլ ասկալի առնետներ, որոնց բռնելու համար ոչ մի կատու սիրտ չէր անում մոտենալ: Ճամբարի վարչությունը շներ կանչեց, նրանք էլ հեռու էին փախչում այդ հուժկու կրծողներից:

Այն «առնետները», որոնց սիրտ չեն անում մոտենալ մեր դատավորները, մեր մինիստրներն են ու չեկայի անդամները, որոնք օրը ցերեկով դատարկում են պետական ամբարներն առանց դատավորին մի գրոշ տալու:

Առանց մազաչափ խղճահարվելու...

Ստալինի ողջ ժամանակը, ամբողջ քսաներեսուն տարի, գիշեր ու ցերեկ էս մտածում էի այն մասին, թե էթե՛ Ստալինին բռնեն ու

իմ ձեռքը հանձնեն՝ ես նրան ի՞նչ պատժով պատժեմ:

Այդքան մեծ ոճրագործի համար աշխարհի ոչ մի օրենսգրքում պատիժ չի նախատեսված: Ճիշտ այնպես, ինչպես հիվանդի ջերմաչափ շինողները չնախատեսելով, որ հիվանդը կարող է քառասուններեք աստիճան տաքություն ունենալ՝ ջերմաչափը քառասուններով աստիճանից են կառուցել մինչևե այսօր:

Հա: Ուրե՛մն ես ամբողջ երեսուն տարի Ստալինին պատիժ որոնեցի ու չգտա, իսկ այսօր, որ գտել եմ այդ պատիժը, ցավոք սրտի Ստալինն արդեն մեռել է: Գիտե՛ք ինչ պատիժ է գտածա: Ասեմ: Եթե այս րոպեիս Ստալինին կենդանի իմ ձեռքը ստալին, ես առանց մազաչափ խղճահարվելու... կամուսնացնեի նրան կնոջս հետ:

Մատանայի խորհրդապաշտությունը ամերիկյան դոլարի վրա. մատանական գաղտնիքները բացահայտվում են

Շատերը, ցավոք, չգիտեն, որ մատանների Աստվածը... Լյուցիֆերն է, Մատանան: Համապատասխան գրականության մեջ, օրինակ, Երեմեյ Պարոտլի «Լյուցիֆերի գահը» գրքում (Մոսկվա, Քաղիրատ, 1991) կան տեղեկություններ այս մասին: Ասում են, թե ցածր աստիճանի մատանները, ինչպես նաև մատանական տիպի կամ մատանական կազմակերպություններ անհավասար ստեղծված կազմակերպությունների անդամները չգիտեն այդ արքայազնի ճշմարտության մասին: Մատանների իրական Աստծո ով լինելու և այս առնչությամբ մատանական կազմակերպություններ անհավասարվողների մեծամասնության բացարձակ անտեղյակության մասին գրել է նաև Արտավազ Ավագյանը կամ այդ անուն-ազգանվամբ հանդես եկած անձնավորությունը դոկտոր Քեոնի Բերնեսիս ուղղած իր 04.12.2003 թ. նամակում:

Կարելի է նաև ասել, որ մարդկությունը, չնչին բացառությամբ, տեղյակ չէ, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներն իրականում հիմնադրվել է մատանների կողմից, այդ պետության հիմքերում նրանք են կանգնած: Շատերին է հայտնի Մատանայի և փողի աստծո (Մամոնայի) ընդհանրությունը: Թերևս պատահական չէ, որ մատանները փողի վրա արտահայտել են իրենց առավել կարևոր խորհրդանիշները (սիմվոլիկան): Գուցե դրապետն նաև միասին ու սատանայական իմաստ են դրել՝ մոգական հատկություն էնթադերելով կամ ակնկալելով, քանի որ մարդիկ հաճախ են շփվում փողի հետ՝ ունենալով այն իրենց ձեռքում կամ գրպանում, ծոցագրպանում և այլուր, մի խոսքով, փողից գրեթե անբաժան լինելով: Եվ նախկինում, և այսօր աշխարհում առավել տարածված ու հայտնի վճարամիջոցն ամերիկյան դոլարն է: Թերևս սա նախապես ծրագրելով է նաև, որ մատանները իրենց խորհրդանիշները դրել են դոլարի վրա: Ընդ որում, կարծես սկզբունք լինի դրա համար ոչ թե մետաղադրամի, այլ թղթադրամի ընտրությունը: Ավելին, քանի որ մատանները՝ որպես «ազատ որմնադիրներ» և «այս աշխարհի ճարտարապետներ», շատ են կարևորում հիմնաքարի գաղափարը, իրենց խորհրդանիշներն արտահայտելու համար ընտրել են դրամական համակարգի (այդ յուրօրինակ բուրգի) հիմքում, սկզբում գտնվող՝ ամենափոքր դրամական միավորը: Չէ՛ որ Բասցա, ավելի բարձր արժողության թղթադրամները դրան հաջորդում են, և այն, ինչ որ հիմքում է դրված, իր խորհրդաբանությամբ որոշիչ է դառնում ամբողջ համակարգի՝ դրամական բուրգի համար: ԱՄՆ-ի դոլարների պարագայում դա 1 դոլարանոցն է: Ավելի բարձր արժողության դոլարների վրա էլ միգուցե կան մատանական ինչ-որ խորհրդանիշներ, սակայն վստահաբար կարող ենք ասել, որ դրանք կենտրոնացված են հենց 1 դոլարանոցի վրա: Մեզանում ոմանք, անտեղյակ դոլարի գաղտնիքին ու մինչև իսկ չնկատելով 1 դոլարանոցի վրա եղած խորհրդանիշները, կարծես 6-րդ զգայարանով իմանալով ճշմարտությունը, ասում են, որ դոլարը Մատանայի գործիքն է կամ զենքը:

Ովքեր քիչ թե շատ ծանոթ են մատանությանը, գիտեն, որ «կրոնա»-քաղաքական այդ յուրօրինակ մաֆիայում գերիշխող է



խորհրդապաշտությունը: ԱՄՆ-ը մատանների կողմից սկզբնապես և իմաստավորված կերպով հիմնվել է իբրև 13 նահանգների միություն: Ուշադրություն բերենք այս թվին, այն ունի մեծ խորհուրդ, որին կանոնադրանք քիչ հետո: ԱՄՆ-ի առաջին դրոշի վրա 13 աստղիկ է եղել և 13 շերտ՝ երկու գույնի և միայնց հաջորդող: Այդ 13 շերտն առկա է նաև ԱՄՆ-ի այսօրվա դրոշի վրա: ԱՄՆ-ի Կոնգրեսը 1817 թ. որոշում է ընդունել վերադառնալ 13 շերտին՝ անկախ նրանից, թե հետագայում քանի նահանգ կունենա ԱՄՆ-ը: Դրոշի և դոլարի բուն տերերի կողմից այնքան մեծ է 13-ի գործածումը, յուրօրինակ պաշտամունքը և դրան տված կարևորությունը, որ այդ թիվը՝ ծածկագրված ձևով, արտահայտված է նաև դոլարի չափերով: Ահավասիկ. ԱՄՆ-ի և 1 դոլարանոցի, և այլ արժողության թղթադրամների լայնքը 6,7 սմ է (6+7=13), իսկ երկարությունը՝ 15,7 սմ (1+5+7=13): Արտադրելիս հնարավոր է գործարանային չնչին շեղում նշված չափերից: Մեկ դոլարանոցի ետևի աջ կողմում պատկերված է ԱՄՆ-ի պետական գերբավոր կնիքը կամ գերբը, որի վերևի մասում արտահայտված է հնգաթև 13 աստղիկ: Թերևս դա կարող էր սովորական թվալ՝ իբրև ԱՄՆ-ի գոյության սկզբում 13 նահանգներից բաղկացած լինելու խորհրդանիշ, եթե չլինեին այլ փաստեր, որոնց համատեքստում պետք է դիտարկել այդ իրողությունը: Օրինակ, այդ 13 աստղիկ բաղկացած են «Դավթի աստղ» կոչվածի՝ իբրև մեջ մտած երկու եռանկյան ձևով: Ի դեպ, վերոնշյալ աստղը ոչ միայն հրեաների ազգային և Բարայելի պետական խորհրդանիշն է (ինչպես հայերիս պարագայում՝ Մասիսը), այլև ամերիկյան նահանգներից մեկի խորհրդանիշը կամ զինանշանը: Մի թե հարց չի ձևվում՝ ԱՄՆ-ում և Բարայելում ոմանք ի նշու են այդքան սիրում իրար հանդիպակաց, իրար մեջ մտած եռանկյունիների ձևով այդ վեցաթև աստղը: Զինանշանում պատկերված արծիճի իր մագիլներից մեկով պահել է 13 հատ նետ: Դրանք ուղղված են նրանց դեմ, ում հակառակվում են, իսկ ավելի որոշակի՝ Աստծո դեմ, քանի որ «Մատանայի դյուրմիքը»՝ 13-ը ներկայացնող այդ նետերն ուղղված են և դեպի վեր, և դեպի աջ: Ընդամենը հիշենք, որ Քրիստոսը համբարձվելուց հետո բազմեց Նոր աշ կողմը: Ընդունված է, որ աջը հաջողություն, առաջընթացի, բարու և Աստծո խորհրդանիշ է, մինչդեռ ձախը՝ ճիշտ հակառակը: Իր մյուս մագիլով նույն արծիվը պահել է մի ճյուղ, որը դարձյալ 13 բողբոջ և 13 տերև ունի: Արծիճս ինքը վահանավորված է ԱՄՆ-ի դրոշով՝ բաղկացած 13 շերտից: Գիշատիչ թռչունն

իր կեռ կտուցով պահել է մի ժապավեն, որի վրա լատիներեն 13 տառերով գրված է՝ E PLURIBUS UNUM (բազմությունից դեպի միակը): Բազմությունը, կարծում ենք, ինքնին հասկանալի է, որ աշխարհի ազգերը, ժողովուրդներն են, իսկ միա կը... Այդ ժապավենից մտա կես սանտիմետր վերև պատկերված վեցաթև աստղը հուշում է, թե որպես Էթոսս ուլթեր և որպես գերագույն ուժ ով է այդ միակը: Արծիվը նայում է դեպի ձախ, որի խորհրդանշական իմաստի մասին արդեն նշեցինք: Իսկ ի նչ է պատկերված ձախ կողմում... հայտնի բուրգն է՝ գազաթի եռանկյան մեջ շողարձակող աչքով, որից արծիվը, շողարձակմանը դիմահայաց նայելով, թերևս հայցում ու ստանում է իմաստություն:

ԱՄՆ-ի 1 դոլարանոցի ետևի ձախ կողմում ուղղահայաց 13 շարք քարերից բաղկացած բուրգի պատկերն է՝ ծայրանկյունային հանված քարով և փոխարինված եռանկյան մեջ պատկերված ամենատես աչքով՝ մատանական հայտնի խորհրդանիշով: Արտավազ Ավագյանի վերոնշյալ նամակում ուշադրություն է հրավիրվում այն հանգամանքի վրա, որ հին մատանությունը եռանկյունի սովորաբար օգտագործում է այդ աչքի հետ միասին: Մատանական խորհրդանիշների մեջ, ըստ նրա, որևէ այլ խորհրդանիշ իր իմաստով դրանից ավելի մեծ նշանակություն չունի: Այն կոչվում է «Տիեզերքի Մեծ ճարտարապետ»: Ամբողջական խորհրդանիշը բուրգն է, որի վերևում շողարձակող եռանկյան մեջ ամենատես աչքն է, ըստ Ա. Ավագյանի, «Մատանայի աչքը»: Հեղինակը տեղեկացնում է նաև, որ իմաստության տերերը (մատանները) ուղղորդում են մարդուն մի ճանապարհով, որը տանում է համաշխարհային միասնական կարգի: Կարելի է հասկանալ, որ խոսքը Համաշխարհային կառավարության ստեղծման և նրա հաստատելիք կամ նախատեսված միասնական կարգի մասին է:

Արտավազ Ավագյանն իր վերոնշյալ նամակում գրել է նաև իլյումինանտների կազմակերպության մասին՝ հիմնադրված 1776 թ. մայիսի 1-ին, ճիզվա Ադամ Վայսհաուպտի կողմից: «Իլյումինանտ» անունը վերցված է Լյուցիֆերից: Իլյումինանտները, ըստ հեղինակի, նվիրված են եղել «Նոր Համաշխարհային Կարգին» կամ «Համաշխարհային Մեկ Կառավարությանը», որն այսօր ստույգ նպատակն է նրանց հետևորդների, գործը շարունակողների: Նամակագրի հավաստմամբ, ամեն մի 1 դոլարանոց թղթադրամի վրա կա թվագրություն՝ 1776 (այսինքն՝ իլյումինանտների կազմակերպության ստեղծման տարեթիվը): Ա. Ավագյանի տեղեկացմամբ, այդ տարեթիվն է արտահայտում բուրգի հիմքի կամ առաջին շարքի քարերին արտահայտվածը՝ MDCCLXXVI: Իսկ ով է եղել Ադամ Վայսհաուպտը...

Ըստ «Հակաքրիստոսի Էլեկտրոնային խաղթը» գրքում գետեղված դոկտոր Կոլ Սանդերսենի ելույթի (ք. Ապրիլան, Վաշինգտոնի նահանգ, 1993 թ. ամառ), «1750 թ. հրեա Բաուերը զբաղվում էր ոսկու արդյունահանմամբ, ապրում էր Ֆրանկֆուրտում: Նրա ձեռնարկության ցուցանակը կարմիր վահան էր: Նրա որդին

150

դարձավ բանկիր, փոխեց ազգանունը՝ Բաուերից Ռոտշիլդ, որը նշանակում է կարմիր վահան: Այդ բանկիր Ռոտշիլդն ուներ 5 տղա, որոնց մեկ առ մեկ ուղարկել էր տարբեր քաղաքներ՝ Լոնդոն, Փարիզ, Նեապոլ, Վիեննա, Ֆրանկֆուրտ, որպեսզի նրանք փողի միջոցով հսկման տակ պահեն այդ երկրները: 1775 թ. Ռոտշիլդը 12 այլ տղամարդկանց հետ կազմակերպել է «13-ի խորհուրդ»: Նրանք Ադամ Վայսհաուստին ընտրել են խորհրդի ղեկավար: Ադամ Վայսհաուստը (նշանակում է «սպիտակ գլուխ») պատկանում էր ճիզվիտների օրդենին (աստանայապաշտական կազմակերպություններից մեկը): Այդ խորհուրդը ներկայումս հսկում է ոչ միայն ԱՄՆ-ի, այլև ամբողջ եվրոպական համակարգը...

Մեկ դոլարանոցի վրա պատկերված բուրգի տակ, ժապավենում գրվածը՝ NOVUS ORDO SECLORUM («Նոր համաշխարհային կարգ», կամ՝ «Մանանակների նոր կարգ»), արտահայտում է Համաշխարհային կառավարության ստեղծմանը ձգտողների կարգախոսը: Արդեն հասկանալի է, որ խոսքը բազմությունից ընտրյալ մեկի, ավելի ճիշտ՝ նրա որոշ ներկայացուցիչների կարգախոսի

և նպատակի մասին է: Ինչ վերաբերում է ընտրյալ լինելուն, դա անառարկելի է այդ, ընտրյալ են, միայն թե ամբողջ ինչդիրն այն է՝ ում կողմից են ընտրված. Աստծո, թե Մասանայի...

Դարձյալ 1 դոլարանոցի ետևի (վերին) մասում գրված է՝ IN GOD WE TRUST, որը հայերեն թարգմանվում է «Աստծոն մենք վստահում ենք»: Ձեր մտքով երբևէ չի անցել թե «Աստված» բառն ինչ գործ ունի մի այնպիսի իրողության հետ և իրի վրա, ինչպիսին դոլարն է: Այդքան քրիստոնյա հավատացյալ էին ամերիկյան մայրցամաքի բնիկների ցեղասպանության հեղինակների ոչ հեռավոր հետնորդները, նրանց «շարունակողները»... Նրանք, ում ժառանգներն, իրենց հերթին, երևի դարձյալ հավատալով ու վստահելով նույն կամ իրենց Աստծուն, մասոն Հարրի Թրումենի միջոցով չերկնչեցին Հերոսիմայի և Նագասակիի ատոմային ուժբազմություններից: Եվ եթե այդքան հավատացյալ էին, ապա իրականում ու ուն էին հավատում ու վստահում, ո՞վ էր իրենց Աստվածը՝ արարիչ Աստված ծը, թե կործանման տանողը՝ «Մասանա-աստվածը»: Այդ հավատացյալների «միսիան» շարունակողներն այսօր էլ նույն Աստծուն, նույն ուժին են հավատում ու վրս-

տահում: Նույն դոլարով (կաշառքներով, դրամաշնորհներով, վարկերով և այլն), նույն վաշխառությամբ (տոկոսով, շահով փող տալով, որը կործանարար թմրադեղ տալու է նման) նրանք, քստ էություն, ստրկացնում ու նվաճում են աշխարհը, թելադրում, որոշ դեպքերում էլ փորձում թելադրել իրենց կամքը՝ հետամուտ լինելով նոր աշխարհակարգի և համաշխարհային տիրապետության, իսկ այնուհետև՝ որոշակի քայլերի: Համաշխարհային կառավարություն ստեղծելը և աշխարհին տիրելը նրանց համար ոչ թե վերջնական նպատակ է, այլ միջոց՝ Մասանայի ղեկավարությամբ ու նրա գործախմբի կազմում Աստծո դեմ ելնելու, նրա փրկչական ծրագիրը խափանելու համար: Եվ եթե «Աստված» բառը դոլարի վրա է, և դոլարը, իր վրա եղած այդ «Աստված»-ով հանդերձ շատերի համար պաշտամունքի առարկա է, մի թե հասկանալի չէ, որ այդ աստվածը փողի աստվածն է՝ Մամոնան, Մատանայի «մասնագիտացած» դրսևորումը, որը գործել է շատերի էսամոլությանը, գայթակղվելու թուլությամբ:

Արթուր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աֆորիզմներ ուսուցիչների մասին



Ուսուցչի վարքի միայն լավ օրինակն առավել օգուտ է աշակերտին, քան բազում դասերն առանց լավ օրինակի:

Եթե մանուկները լավ իմանային, թե ինչ է մարմնի սնունդը և ինչ հոգունը, ուսուցիչներին կկոչեին լավ հայր, իսկ ծնողներին միայն հայր, որովհետև ծնողները կերակրելով սնուցում են մարմինները, մինչդեռ ուսուցիչներն իմաստությամբ ու առաքինությամբ հոգինները:

Լափս է այն ուսուցիչը, ում չի գերազանցում աշակերտը:

Լեոնարդո Դա Վինչի

Ամենամեծ գովեստն ուսուցչի համար այն է, երբ գովում են իր աշակերտին:

Շառլոտ Բրոնտե

Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ կլինի: Եթե ուսուցիչը սիրում է աշակերտին, ապա նա ավելի լավ ուսուցիչ կլինի, քան նա, ով կարդացել է բոլոր գրքերը, բայց չի սիրում իր աշակերտին: Եթե ուսուցիչը սիրում է և իր աշխատանքը, և իր աշակերտին, նա կլինի կատարյալ ուսուցիչ:

Լև Տոլստոյ



Նաիրա ՍԻՄՈՆՅԱՆ

Երբ դու կաս, երբ դու կաս ծառերը վկայում, Եվ օդը գուժում է ապրելուս մասին, Բառը կապտացողք իր աղանամդում Վճիթ է պահում կանչը իմ սրտի:

Աշուն ու ձմեռ մի եղանակված շուրվում են գարնան գմրուխտյա բովում, Վեր են խոյանում ցնորքից մահվան Կենսաց հրացուլը ծնունդը տանում:

Օրը շքեղ է բացվում, բարձրագույն, Գյանքը հրաշք է, կերտվածք անթերի, Խումու են մեղքի բաժակները ողջ, Մեղապարտ սիրում թող Տերը խաչի:

Երբ դու կաս, մարմինս անկշիռ, թեթև է, Պարոս մ եմ այդժամ ցավի ծովերին, Դազարոսամանն արդեն անտև է Սիրուս հրովարտանը եղել է ապրի ր:

Գարուն, թե մի օր գաս ու ինձ չգունես, և պատուհանիս զեփյուռը մեղմիկ վարսս որոնի սիրելու համար, ասա գնացի այն հեռուները, ուր մայրամուտի բոցեղ գույները լուռ ծրարել են լինելությանս լուսե խորհուրդը, իսկ սե քս հագա ք շուրթ է համբուրում՝ հասու լինելու մի ճշմարտության...

Ողջուն անգինս: Աշուն է հիմա, Միբիրի աշունը գրկում ձների, Գյանքի զեղաբեմ թատրոնում եղա, Եվ տեղ խաղացի, և, ապա գերի: Չուր ես հայացքդ հարցերով թերթում, Նախնյաց շիրմի պես ես էլ եմ անբառ, Այս ամբողջից լոկ քո գիրկն եմ հիշում, Համբույրող շուրթիս դաջված ոսկետառ: Ողջ առեղծվածից գուլիս չեմ հանում, Ո՞վ է կարգել ինձ պահապան ինչի ... Այս ամբողջից լոկ քո գիրկն եմ հիշում, Կավեղ շուրթերդ իմ աղանորդի...

Ետ դառնամ, հոսեմ ակունքներս ի վար, Հասնեմ խոհերիս ներձնունդ, Բառը կարկատեմ խոյանքիս վրա, Գտնեմ մոլորումիս մարմինը քաղցրաբույր:

Կույր աղոթողի արցունքի նման Մաքրեմ խռուքս հավատափեշին, Աղբյուրի նման իմ մթից պոկվեմ Ու ցայտեմ լույսի ամերով կրկին:

Չերկաշին Պավել Ռուդոլֆի



Օսկել է 1973 թվականի սեպտեմբերի 28-ին, Տյումենի տարածաշրջանի Յամալա-Նենեցական ինքնավար մարզի Մուժի գյուղում: Բարձրագույն կրթությունը ստացել է Տյումենի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Առաջին անգամ տպագրվել է տասնվեց տարեկան հասակում:

2000 թվականից Ռուսաստանի լրագրողների միության անդամ է: 2003 թվականից Ռուսաստանի գրողների միության անդամ: Համառուսաստանյան «Վահան և խոսք» մրցույթի մրցանակակիր է (2003): Ռուսական համացանցային գրական «Միրո մասին» մրցույթի դափնեկիր «Ռոեֆա» անվանակարգում (2005): Տարածաշրջանային «Տարվա գիրք» VI մրցույթի մրցանակակիր է «Հոգու» գրքի և «Ռրսորդական արահետներով» անոդիոգրքի համար (2012): Ուրալյան դաշնային շրջանի գրական մրցականի դափնեկիր է բանաստեղծությունների «Հոգու» ժողովածուի համար (2012): Դ. Ն. Մամինա-Սիբիրյակի անվան համառուսաստանյան գրական մրցանակի դափնեկիր է (2013): «Երիտասարդ Պետերբուրգ» գրական մրցանակի դափնեկիր է: (2013): Յուգրայի նահանգապետի մրցանակի դափնեկիր գրական շրջանում «Արձակ» անվանակարգում (2013):

Հեղինակ է արձակ և չափածո տասնյոթ գրքերի: Նրա ստեղծագործության առանձին հատվածներ տեղ են գտել 9-11 դասարանների ուսումնական քրեստոմատիաներում, «Յուգրայի ժամանակակից գրականություն» գրքում, Ռուսաստանի գրողների միության տյումենյան գրական կազմակերպության «Տյումենյան շարով...» անթոլոգիայում, քառասուներորդ «Յամալյան գրականության անթոլոգիայում» և «Ռուսաստանի բանաստեղծներ» հանրագիտարանում:

1999 թվականի զարնանից ապրում է աշխատում է Խանտի-Մանսիական Պավել Չերկաշինին հայերեն է թարգմանել Նաիրա Միմոնյանը:

На пустыре, где выше плеч крапива
И путами выюнка стреноженный бурьян,
Глотаю жадно рёз хмельное пиво
И беспричинно плачу, будто в стельку пьян.
Тоска моя почти всегда слезлива,
Наверное, таков души моей изъян,
Но он же лекарь: пусть неторопливо, –
Затягивает шрамы злых житейских ран.

Доброта не в моде ныне.
Совестьяся, что ль, её?
Реже думает о сыне
Мать, заморское бельё
Продающая на рынке.
Да и он не пишет ей.
Дед глядит с фотокартинки
Огорчённо на детей.
Очерствели наши души.
Если завтра на заре
И любовь очаг потушит,
Зябко станет на земле.

Грядущим жить? – Обман! Обман!
Я был певцом мечты.
Но вот разбился талисман
Той призрачной четы.

Свободен я от грёз и снов,
Но выиграл ли я?
Что в настоящем? – Звон оков
И в рубище земля.

Волнующий осколок лета:
Луга послушные ветрам,
Заря до самого рассвета –
Сестра космическим кострам.

Шептанье трав, вуаль тумана
По-над рекою, неба синь.
Я словно в сказке без обмана,
Пленённый кротостью осин.

Нагая тишь меня балует,
И лишь далече за селом
В тайге кукушечка кукует,
Поёт извечный свой псалом.

Ամայությունում, ուր եղինջներն են փարթում,
Եվ ազուցվել են պատաստուկ ու մոլախոտ,
Ես կոնծում եմ անուրջների ոգեղիցն արբեցման,
Եվ անառիթ լալիս եմ հանց թունդ գինեմոլ:
Թախիծս գրեթե միշտ է լինում լալկան,
Հոգուս թերությունն այդպիսին է երևի,
Բայց նա բժիշկ է, թող կամաց-կամաց
Չար կենաց վերքերն իմ ամոքի:

Բայությունը չէ հիմա մոդայում:
Ինչ է, խղճու մ են նրան,
Որդու համար հազվադեպ է մտահոգվում
Մայրը, ներքնագգեստ արտերկրյա
Վաճառող շուկայում:
Ոչ էլ գրում է նրան որդին:
Պապն հիասթափ է նայում
Լուսանկարից գավակների:
Մեր հոգիներն են քարացել:
Եթե վաղը արշալույսին
Մերն էլ իր կրակը մարի,
Յուրտը կտիրի աշխարհին:

Գալիքով ապրե՛լ – խաբկանք է, խաբկանք,
Ես երգիչն էի երազների:
Ահա համային է փշովել
Այն տեսլային գույզի:

Ես ազատվել եմ անուրջ-երազներից,
Բայց շահել եմ արդյոք,
Ներկայում ի նչն է: Ձևագո շղթաների,
Եվ վիրամաշ հող:

Հուզիչ օրեր են ամռան,
Հնազանդ են մարգերը պուքերին,
Այգը մինչև լուսաբաց
Քույր է տիեզերական խարույկներին:

Խոտերի շրշումն, կապույտ երկնի,
Շղարշ մեզերի գետը պարուրած:
Ես հեքիայում եմ, առանց խաբկանքի,
Բարդիների հեզությամբ գերված:

Կուսական լռությունն է ինձ փայփայում
Միայն հեռու գյուղից անդին,
Կլույն է կանչում տալգայում,
Երգելով իր սաղմուդը հին:

В позолоту мерцающих звёзд,
В молоко полнолуной ночи,
До созвездий – космических гнёзд –
Я хочу улететь. Замолчи!

Не держи меня. Знаю, что любишь.
Верю в искренность ласки твоей.
Но ведь ты окрылённого любишь,
Я – крылатых небесных кровей.

Отпусти! Белоснежные крылья
Снова просят в дальний полёт.
Не грусти, о тебе не забыл я,
О тебе моё сердце поёт.

Я поведаю братьям пернатым,
Что тобою так ярко горю.
Никогда не бывал я богатым,
Но я крылья тебе подарю!

Ոսկեզօծում փայլող աստղերի,
Կարթագույնի մեջ գիշերվա լիալուսնի,
Մինչ համաստեղություններ տիեզերաքների,
Ես թռչել եմ ուզում: Լռի՛ր:

Ինձ մի՛ բռնիր: Գիտեմ, սիրում ես,
Հավատում եմ անկեղծ քո փայփայանքին:
Բայց այն թևավորին ես դու սիրում,
Նրանց երկնազարմից եմ ես սերում:

Բա՛ց թող: Չյունձերմակ թևերը
Նորեն հեռավոր թռիչք են հայցում:
Մի տիրիր, ես քեզ չեմ մոռացել,
Իմ սիրտը քո մասին է երգում:

Փետրավորներին քո մասին կպատմեմ,
Որ քեզանով եմ պայծառ այրվում:
Ես երբեք հարուստ չեմ եղել,
Բայց քեզ թևեր եմ նվիրում:

«Մեզ մոտ ամեն ինչ կառուցված է ձեռքի կառավարման սկզբունքով»

Հայտնի գործարար Սամվել Կարապետյանը հարցազրույց է տվել ռուսական P5K ամսագրին, որը թարգմանաբար ներկայացնում էնք ստորև

«Տաշիր» խմբի սեփականատեր **Սամվել Կարապետյանը՝** ճգնաժամի ժամանակ բիզնեսի նկատմամբ վերահսկողությունը պահպանելու, Մոսկվայի քաղաքապետ Մերգել Մոքրանինի հետ ունեցած հարաբերությունների և Mirax Group-ի հիմնադիր Մերգել Պոլոնսկու հետ չհաջողված գործընկերության մասին

Սամվել Կարապետյանը քերից է շինարարության և անշարժ գույքի կառավարման բիզնեսում, ում հաջողվեց ճգնաժամի տարիներին չվաճառել բիզնեսի իր մասնաբաժինը կամ դրանք գրավադնել բանկերում: Ավելին, համընդհանուր անկման շրջանում գործարարին հաջողվեց կրթկենսապատկել իր բիզնեսի ծավալները և զբաղվել նոր ծրագրերով՝ տարածքների վարձակալության հանձնում, հասարակական սնունդ և էներգետիկա: 2006 թ. համեմատ՝ 2012 թ. «Տաշիրի» շրջանառության ծավալներն աճել են չորս անգամ՝ 22 միլիարդ ռուբլուց հասնելով 90,2 միլիարդի: Եվ այդ ամբողջ ընթացքում Կարապետյանը, հետևելով «Փողը սիրում է լռություն» սկզբունքին, չէր պատմում, թե ինչպես է կառուցում իր կայսրությունը: Մա նրա առաջին հարցազրույցն է 10 տարվա ընթացքում, որում նա բացահայտել է հաջողության բանաձևը և պատմել ապագայի ծրագրերի մասին:


«Քաղաքականությունն իմը չէ»

– Ինստիտուտն ավարտելուց անմիջապես հետո Դուք դարձաք ենալապատ սպասքի գործարանի տնօրեն: Ինչպե՞ս Ձեզ հաջողվեց ուսանողական նստարանից միանգամից հայտնվել ղեկավար պաշտոնում:

– Անկեղծ ասած, միանգամից չեմ հայտնվել: Ինստիտուտից հետո ես սկզբում աշխատել եմ գործարանի գլխավոր տեխնոլոգ, հետո միայն՝ տնօրեն:

– Գլխավոր տեխնոլոգը նույնպես ղեկավար պաշտոն է, և սովորաբար երեկվա շրջանավարտին չեն նշանակում:

– Այո, այդպիսի բան տեղի է ունենում շատ հազվադեպ: Բայց իմ դեպքի համար կա բացատրություն: Ամեն ինչ տեղի է ունեցել Հայաստանում, իմ հարազատ Գալինինոյում, որտեղ բոլորը գիտեն իրար: Հայրս դպրոցի տնօրեն էր, մայրս՝ անգլերենի ուսուցչուհի: Մեր ընտանիքը լավ համբավ ուներ, այնպես որ, իմ ազնվությունը և գործարանը կառավարելու հնարավորությունները կասկածի տակ չդրվեցին: Բացի այդ, 20 տարեկանում, երբ ավարտեցի ինստիտուտը, բավական ակտիվ և նպատակալուստ երիտասարդ էի, պատրաստ շատ աշխատել և ամեն ինչ սովորել: Ինձ թվում է, որ գործարանի



տնօրենը՝ հրավիրելով ինձ աշխատանքի, լավ գիտեր, որ ճիշտ ընտրություն է կատարում:

– Երեք տարի անց Դուք ստեղծեցիք «Ձենիթ» կոոպերատիվը՝ շարունակելով աշխատել գործարանում: Մանրամասն պատմեք այդ ժամանակաշրջանի մասին:

– Ինստիտուտն ավարտելուց երեք տարի անց՝ 1989 թ., ես ստեղծեցի իմ առաջին գործը՝ «Ձենիթ» բազմապրոֆիլ կոոպերատիվը, որը զբաղված էր ռետինե և մետաղական իրերի, ինչպես նաև հագուստի արտադրությամբ: Ավելի ուշ գնեցի եմալապատ սպասքի գործարանը, որի ղեկավարն էի, և այն վերափոխեցի կոոպերատիվի: Հասկանում էի, որ այդպիսով ստեղծում եմ ավելի ժամանակակից հարթակ, որը կարող է զարգանալ փոփոխվող տնտեսության պայմաններում: Դրան զուգահեռ՝ ցանկանում էի գործել ինքնուրույն: Միշտ առաջնորդվում եմ այն սկզբունքով, որ ավելի լավ է ձեռք բերել հարգանք՝ զբաղեցնելով առաջնորդի դիրք, քան հետևել այլոց հրահանգներին:

– Ի՞նչ խոչընդոտների եք հանդիպել այդ ժամանակ:

– Կարող է զարմանալի թվալ, բայց այն ժամանակ ես չէի տեսնում դժվարություններ կամ խոչընդոտներ, որոնք հնարավոր չէր հաղթահարել: Ես սկսել եմ իմ գործը՝ հավաքելով ընկերներիս, մենք քննարկել ենք գաղափարը, գործողությունների ծրագիրը և սկսել ենք աշխատել: ամեն ինչ պարզ էր և առանց որևէ դժվարությունների:

– Ձեր հարազատ եղբայրը՝ Կարեն Կարապետյանը, մինչև 2011 թ. Յայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավարն էր, իսկ այժմ պատգամավոր է: Ինչո՞ւ նրա օրինակով՝ Դուք էլ չգբաղվեցիք քաղաքականությամբ:

– Դա ինձ հետաքրքիր չէ, դա իմը չէ:

– Իսկ ինչո՞ւ որոշեցիք տեղափոխվել Ռուսաստան:

– Ես ունեի ծրագիր. եկա-հաստատվեցի-հաղթեցի (ծիծաղում է: խմբ.): Ռուսաստանում իմ առաջին հանգրվանը Լիպեցկն էր:

180

Այդ քաղաքն ընտրեցի, քանի որ շրջանը և մարդիկ ինձ շատ լավ ծանոթ էին. մեր կոռպորատիվն այդ ժամանակ ակտիվ համագործակցում էր Նովոլիպյեցկի մետալուրգիական գործարանի հետ: Մենք նրանցից մետաղ էինք գնում, իսկ նրանց վաճառում էինք հատուկ հանդերձանք: Լիպյեցկից տեղափոխվեցի Մոսկվա, իսկ ավելի ուշ հաստատվեցի Կալուգայում, որտեղ բավական թվով ընկերներ ունեի: Բացի այդ, այնտեղ էին ապրում իմ զարմիկները:

– Կալուգայում Ձեր բիզնես պրոսֆեկտը բավական դիվերսիֆիկացված էր. դեղագործություն, կաթի գործարան, շինարարություն, հասարակական սնունդ: Ի՞նչ սկզբունքով էիք ընտրում ակտիվները և ի՞նչ միջոցներով էիք գնում:

– Առաջին գումարը ես վաստակել եմ դեռ Հայաստանում: Դա ինձ հնարավորություն տվեց ապրել բարեկեցիկ կյանքով, դրամով ես գնեցի Ռուսաստանի իմ առաջին ակտիվները: Հետո բիզնեսը սկսեց զարգանալ նոր նախագծերից եկող եկամուտներով, որոնցով ես զբաղվեցի Լիպյեցկում և Կալուգայում: Հենց այդ ժամանակ ձևակերպեցի «Տաշիրի» աշխատանքի հիմնական սխեման, որը գործում է առ այսօր. մենք միշտ փնտրում ենք ակտիվներ, բայց պատրաստ ենք ներդնել միայն ամենահետաքրքիր և ամենաեկամտաբեր ակտիվներում: Այդ որոնումների արդյունքում այն ժամանակ մենք հավաքեցինք շուկայի լավագույն առաջարկները:

– Ամեն ինչ մինչև այժմ մնացել է:

– Այո: Ձեր կողմից թվարկվածներից այսօր մեզ չի պատկանում միայն Կալուգայի դեղագործարանը: Բայց երբ մենք այն գնեցինք, արդեն չէր աշխատում, և այդ պատճառով մեզ բացառապես հետաքրքրում էր այն տարածքը, որտեղ այն գտնվում էր: Գործարանի դիրքն առավելապես նպաստավոր էր մեր առաջին առևտրի կենտրոնի շինարարության համար:

– Դուք աշխատում եք ամբողջ երկրում՝ Դեռավոր Գյուսիսից՝ մինչև Ռուսաստանի հարավային շրջանները: Ո՞ր շրջաններում է առավել դժվար:

– Դժվար է աշխատել աղքատ շրջաններում: Հենց հիմա մենք փորձում ենք բիզնես ստեղծել դրանցից մեկում: Ինձ թվում է՝ այդ տարածքների տնտեսական անհաջողություններն անմիջականորեն կապված են նրանց կառավարման թիմերի անարդյունավետության հետ, որոնք, փոխանակ խորտակվողին փրկելու, հավելյալ խոչընդոտներ են ստեղծում բիզնեսի համար: Ջարմանայի է, բայց այդ մարդիկ չեն հասկանում, որ գործարարների առջև վառված կանաչ լույսը կարող է արագացուցիչ դեր կատարել տարածաշրջանի աճի համար: Ես համոզված եմ, որ մեր ընկերությունն իրենց ավելի շատ է պետք, քան իրենք՝ մեզ:

Յնվելով հարազատների և Սփյուռքի վրա

– Ինչպե՞ս ճգնաժամն ազդեց «Տաշիրի» վրա:

– Դրական: Մենք կոփված ենք. մենք անցել ենք երկու ճգնաժամի միջով՝ 1998 թ. և 2008 թ.: Երկու դեպքում էլ կարողացանք օգտվել ստեղծված հնարավորություններից:

– Դեռ ճգնաժամային տարիներին «Տաշիրը» դարձավ անշարժ գույքի կառավարման շուկայի առաջատարներից: Ոմանք ստում են, որ հաջողության գաղտնիքը սփյուռքի վրա հենվելն է և ձեր անմիջական մասնակցությունը բոլոր գործընթացներին, մյուսները՝ «Գազպրոմի» հետ մտերմությունը և սև օրվա համար կատարված խնայողությունները: Այսպիսով, ո՞րն է գաղտնիքը:

– Ինչ-որ իմաստով ճիշտ են բոլոր պնդումները: Բայց գերազանահատել «Գազպրոմի» դերը «Տաշիրի» ձևակառուցումը՝ ճիշտ չէ: Զգալի ազդեցություն ունեցել է ամեն ինչը. և մենեջերների ամենօրյա աշխատանքը, և սփյուռքի վրա հենվելը, և ճիշտ բիզնես-ռազմավարությունը, և մեր կողմից ընտրված զարգացման առաջանցիկ տեսլքը, և ցանկացած խնդրի լուծման հարցում մանրակրկիտ մտեցումը. նախագծի ընտրությունից՝ մինչև ներդրումների բաշխում:

– Երբ Դուք տեղափոխվեցիք Կալուգա, քչերից մեկն էիք, ում հաջողվեց լավ հարաբերություններ հաստատել «Գազպրոմի» հետ...

– Այո, մենք նախկինում էլ ենք շփուժներ ունեցել «Գազպրոմի» հետ և այժմ էլ ունենք: Բայց դա ամենին չի նշանակում, որ «Գազպրոմը» մեր եկամուտների կառուցվածքում զբաղեցնում է գերիշխող դիրք, կամ «Տաշիրի» ամբողջ բիզնեսը ենթարկվում է գազային մոնոպոլիստի շահերին: Ինչ-որ պահի «Գազպրոմի» հետ աշխատանքներից եկող գումարը կազմում էր մեր եկամտի զգալի մասը, բայց այժմ այդ մասն ավելի ու ավելի փոքր է: Ներկայումս գազային մոնոպոլիստի հետ պայմանագրերը չեն գերազանցում մեր շրջանառության 3 տոկոսը:

– Ինչպիսի՞ խնայողություններով Դուք դիմավորեցիք ճգնաժամը:

– Ճգնաժամին մենք մոտեցանք լավ համբավով, և փոխառու միջոցների քանակը կրիտիկական չէր: Դա թույլ տվեց «Տաշիրին» հանգիստ զգալ: Առավել ևս, որ բանկերի հետաքրքրությունը մեր նկատմամբ շատ բարձր էր: Երբ ուրիշ ընկերություններ վարկեր էին վերցնում 19-20 տոկոսով, մենք Ռեյֆֆայդենբանկից վարկ ստացանք 6 տոկոսով:

– Ձեր պահուստային ֆոնդում շա՞տ գումար կա:

– Ասեմ այսպես. դրանք լիովին բավարար են ազդեցիվ զարգացման համար:

– Ինչո՞ւ մինչև ճգնաժամը Դուք չէիք վերցրել այնքան վարկեր, որքան միջակիցները:

– Դա իմ բնավորությունն է՝ պարտք չլինել: Եվ դա իմ սկզբունքային դիրքորոշումն է: Մենք կարող էինք բոլոր միջոցներն ուղղել ընդլայնմանը, բայց մենք չենք շտապում՝ հանգիստ և աստիճանաբար շարժվում ենք առաջ:

– Իսկ ինչո՞ւ եք մտնում բոլոր գործերի մանրամասնություններին մեջ: Գուցե դա ճիշտ չէ, որ, օրինակ, Դուք մասնակցում եք առևտրային կենտրոնների ներքին հարդարման աշխատանքներին:

– Ոչ միայն ներգրավված եմ ինտերիերի նախագծմանը, ես ինքս եմ հորինում դրանք: Որևէ մեկին մոտ չեմ թողնում այդ գործըն-

թացին: Դրանից բավարարվածություն եմ ստանում: Աշխատում եմ առավելագույնս ներթափանցել ընթացիկ հարցերի մեջ յուրաքանչյուր հարթությունում և բիզնեսի յուրաքանչյուր ճյուղում: Ինձ համար կարևոր է վերահսկել ընկերության ամբողջ գործունեությունը և հասկանալ, թե ինչպես է աշխատում համակարգը:

– Դուք 200-ից ավելի ընկերություններ ունեք: Եթե ներթափանցեք բոլորի...

– Մեզ մոտ ամեն ինչ կառուցված է ձեռքի կառավարման սկզբունքով: Եվ եթե ես չմասնակցեմ բոլոր գործընթացներին, ապա «Տաշիր» խմբի մեջ կմտնեմ ոչ թե 200 ընկերություն, այլ անհամեմատ ավելի քիչ:

– Ճի՞շտ է, որ նախքան ինչ-որ գործարքի վերաբերյալ որոշում կայացնելը՝ Դուք խորհրդակցում եք հայկական սփյուռքի տեղի ներկայացուցիչների հետ:

– Այո, դա իսկապես այդպես է: Սկզբունքներից մեկը, որի վրա կառուցված է բիզնեսի վարման իմ մոտեցումը՝ հենվել միայն նրանց վրա, ում ես կարող եմ լիովին վստահել:

– Ազգականների հետ աշխատանքը Ձեր բնորոշ գիծն է: Ծառ գործարարներ դա չեն սիրում:

– Իսկ ես սիրում եմ (ծիծաղում է. խմբ.): Չեմ կարծում, որ բիզնեսի վարման ընտանեկան սկզբունքներն անպայման դատապարտված են ձախողման: 20 տարվա ընթացքում իմ բազմաթիվ ազգականներից ոչ ոք ինձ չի հիասթափեցրել: Եվ չի եղել ոչ մի դեպք, երբ ինձ հիասթափեցրած լինեն հայերը:

«Մոսկվայում իրավիճակը փոխվել է»

– Ասում են, որ 2008 թ. հետո «Տաշիրը» հեղեղված էր գնման առաջարկներով նրանց կողմից, ովքեր գտնվում էին կործանման եզրին: Ծա՞տ ակտիվներ են ավելացել:

– Ճիշտ է, հեղեղված էր: Առաջարկներ ստացվում են նաև այժմ: Մենք դրանք ուշադիր ուսումնասիրում ենք և բավական արագ որոշում ենք կայացնում գնման մասին: Չեմ ուզում գովազդել որոշ խոշոր գործարքներ, որովհետև դրանք դեռ չեն ավարտվել, բայց կասեմ, որ առաջին եռամսյակում բոլորը կտեսնեն «Տաշիրը»:

– Ինչո՞ւ ճգնաժամի ժամանակ հրաժարվեցիք աշխատել Սերգեյ Պոլոնսկու հետ, բայց գնեցիք շատ օբյեկտներ, այդ թվում՝ Սերգեյ Գյաղեկյանի՝ Մոսկվայի հարավ-արևմուտքում գտնվող «Գազօյլ-սիթի» բնակելի համալիրը:

– Բանն այն է, որ «Տաշիրը» և Mirax Group-ն ութ կետից բաղկացած համաձայնագիր էին ստորագրել: Պոլոնսկու ընկերությունը չկատարեց դրանցից ոչ մեկը: Բնական է, որ այդ իրավիճակում համագործակցության մասին խոսք լինել չէր կարող: Իսկ Սերգեյ Գյաղեկյանի նախագծերն առավել հետաքրքիր էին և ավելի լավ էին ձևակերպված իրավական տեսակետից:

– Երբ Դուք կորճատում էիք ծախսերը և զբաղվում էիք օպտիմալացմամբ, առաջիններից էիք, որ սկսեցիք նոր նախագծեր. Comedy Cafe ռեստորանների ցանցը, «FreshMarket» մթերային խանութների ցանցը, տան համար նախատեսված ապրանքների «Haw dom» ցան-

190

ցը, «Cinema Star» կինոթատրոնների ցանցը, և այլն: Ո՛ւմ գաղափարներն էին որանք, որտեղի՞ց էիք վերցնում այդ միջոցները:

– Այո, ճգնաժամի ժամանակ մենք որոշեցինք չդանդաղեցնել «Տաշիրի» զարգացման տեմպերը: Ինչ վերաբերում է գաղափարներին, ապա բոլոր նոր գաղափարները գեներացնում է մեր թիմը: Մենք մանրակրկիտ կշռում ենք բոլոր ռիսկերը և մշակում ենք զարգացման ռազմավարությունը: Եվ եթե թույլ ենք տալիս սխալներ, դրանք շատ աննշան են, և, ընդհանուր առմամբ, ոչնչի վրա չեն ազդում, որովհետև մենք այդտեղ ուղղում ենք ոչ այնքան մեծ գումարներ:

– Երբ Մոսկվայի ղեկավարությունը փոխվեց, կառուցապատողների մեծ մասի մոտ խնդիրներ առաջացան, որովհետև նրանց նախագծերը «քնում» էին 7ողային-քաղաքաշինական հանձնաժողովում: «Տաշիրի» ոչ մի օբյեկտի հետևանք էր չկատարվեց: Դա կապված է նրա հետ, որ Դուք Սերգեյ Սոբյանինի հետ ծանոթ էիք դեռևս այն ժամանակներից, երբ նա գլխավորում էր Տյումենի նահանգը:

– Անկեղծ ասած, Սերգեյ Սոբյանինի հետ ես նախկինում ծանոթ չեմ եղել: Ամեն ինչ պարզ է. «Տաշիր» խումբն ընդունեց նոր թիմի խաղի կանոնները, որը կայանում է շուկայի բոլոր մասնակիցների համար հավասար պայմանների ապահովման մեջ, առանց բացառությունների: Անձամբ ես դրանում խնդիրներ չեմ տեսնում: Ավելի ճիշտ՝ հասկառակ, որովհետև իշխանությունների հետ հարաբերությունների մեխանիզմը դարձել է ավելի արդյունավետ և թափանցիկ:

– Կարելի՞ է եզրակացնել, որ մյուսները շարունակում էին պնդել բացառիկ պայմանների վրա:

– Գիտեք, նոր թիմը շատ ուշադիր է իրական ներդրողների վրա, և ինձ թվում է, որ գործնականում վերացրել է շուկայի բոլոր սպեկուլյացիաները: Նախկինում կային ընկերություններ, որոնք համաձայնեցնում էին նախագծեր, ստանում էին թույլտվություններ, և հետո փնտրում էին գնորդներ իրենց օբյեկտների համար: Արդյունքում՝ շատ օբյեկտներ փասցին անավարտ: Երեք տարի առաջ իրավիճակը փոխվեց, և նոր իրականության մեջ աշխատում են միայն նրանք, ովքեր իսկապես կարող են:

– 2003 թ. Դուք ասում էիք, որ «Տաշիրի» առաջնահերթություններն են՝ շինարարությունը, էներգետիկան և գազային ենթակառուցվածքները: Ինչպե՞ս 10 տարվա ընթացքում փոխվեցին առաջնահերթությունները:

– Այսօր գլխավոր ուղղությունը կառուցապատումն է, շինարարությունը և ֆինանսական հատվածը: Մենք առաջավոր դիրքեր ենք մղում էներգետիկ և ճարտարագիտական ընկերություններին, զարգացնում ենք ռիեթորական ուղղությունը:

– Ո՞ր ուղղություններն են առավել շատ եկամուտ ապահովում:

– Եկամուտների շուրջ 50 տոկոսը գալիս է կառուցապատումից, փացած 50 տոկոսը շինարարությունն է, էներգետիկան, ֆինանսները և ռիեթորական գործունեությունը:

– Կա՞ն ընկերություններ, որոնք սուբսիդավորվում են ուրիշների հաշվին:

– Սկզբնական փուլում՝ համարյա բոլորը: Բնական է, որ երբ մենք ստեղծում ենք նոր բիզնես, ներդրում ենք գումարներ ուրիշ նախագծերից: Հետո դրանք ինքնաձայնասածակվում են, իսկ հետո, ընկերությունը պետք է ինքնուրույն լինի: Անշարժ գույքի ոլորտի մեր բոլոր ծրագրերը պետք է ներդրված գումարը հետ բերեն երեք տարում:

– Երեք տարին շատ խիստ պահանջ է: Հավաքաբար լինո՞ւմ են անհաջող ծրագրեր:

– Անկեղծ ասած ոչ: Չնայած յուրաքանչյուր նախագիծ զարգանում է իր տեմպերով, մենք մինչև այժմ իրականացնում ենք դրանցից յուրաքանչյուրը: Դրա հետ մեկտեղ, երբ մենք դուրս ենք գալիս որևէ ընկերությունից, նշանակում է՝ մեզ առաջարկել են լավագույն պայմանները: Օրինակ՝ մենք ունենինք դեղատների ցանց, որը մենք վաճառեցինք այդ պատճառով:

– Դուք ունե՞ք այնպիսի նախագիծ, որը վերապահումով կարելի է անվանել ազդարարյին. Դուք աճեցնում եք վարդեր: Դա հոգո՞ւ համար է:

– Ոչ այնքան: Դա լավ բիզնես է, ինչպես ամբողջ աշխարհում: Մենք ունենք Ռուսաստանում ամենամեծ տնտեսությունը, որի տարածքը 60 հեկտար է, Պենգայի մարզում, և մենք մտադիր ենք այն ընդլայնել: Մոտ ժամանակներս կհասնենք տարեկան 200 միլիոն հոլանդական վարդ արտադրողականության: Ապագայում պլանավորում ենք աճեցնել կակաչներ և ծաղիկների այլ տեսակներ:

– Իսկ չե՞ք պատրաստվում զբաղվել ցորեն աճեցնելով կամ անասնապահությամբ:

– Մենք տարբեր շրջաններում մտնում ենք նման նախագծերի մեջ, եթե այդ մասին մեզ խնդրում են տեղական իշխանությունները: Մասնավորապես, Կարուգայի մարզում զարգացնում ենք երկու կոլտնտեսություն: Մեզ համար դա ոչ պրոֆիտային բիզնես է, բայց դա լավ եկամուտ է ապահովում:

– Սովորաբար իշխանությունները պարտավորում են մասնակցություն բիզնեսում. խնդրում են կառուցել մասնկապարտեզներ, հիվանդանոցներ...

– Պետք է օգնել իրագործելու այդպիսի ծրագրերը, և մենք դա իրականացնում ենք և Ռուսաստանում, և Հայաստանում: Դա դիտարկում ենք ոչ թե՛ որպես պարտականություն, այլ մեր պատասխանատվությունը հասարակության առաջ:

«Սոցիից ենք հեռանում վստասերով»

– Մի քանի տարի առաջ ասում էիք, որ Մոսկվայի և Ռուսաստանի առևտրի կենտրոնների շուկան ամբողջությամբ հազեցած չէ:

– Այժմ ես վստահորեն կասեմ նույնը: Մուկույան շուկան հազեցած է կիսով չափ: Եվ առաջիկա 10 տարին պահանջարկը կզերպանցի առաջարկը:

– Շատ ընկերություններ ներդրումներ են կատարում համացանցում, տեխնոլոգիաներում: Դուք նման ընկերություններ դեռ չունե՞ք: Չե՞ք պլանավորում գործունեություն ծավալել այս բնագավառում:

– Ընդհանուր առմամբ՝ մենք չենք շտապում

ներդրումներ կատարել բարձր տեխնոլոգիաների շուկայում: Դրա հետ մեկտեղ՝ մենք ունենք հեռահաղորդակցության ընկերություն, և եթե նրա գործունեության շրջանակներում հաջողվում է օգտագործել բարձր տեխնոլոգիաներ, մենք դա անում ենք: Անկեղծ ասած, ես չգիտեմ ուղղություն, որտեղ մենք ներկայացված չլինենք:

– Տրասպարտում: Դոմոդերովո օդանավակայանը, օրինակ՝ վաճառվում է:

– Վաճառվում է, բայց այնտեղ գնորդների հերթ է: Կարծում եմ՝ Դոմոդերովոյում առանց մեզ էլ գրույն կհանեն: Եվ խնդիրն այն չէ, որ այնտեղ կոշտ մրցակցություն է դրանից մենք չենք վախենում, մենք մշտապես բարձր ենք պահում մեր ապրանքանշանը: Դա հնարավոր է այն դեպքում, երբ յուրաքանչյուրը զբաղվում է իր գործով:

– Կա նաև նախատեսությունների ոլորտը: Ինչ-որ առիթով ասել էիք, որ համակրում եք Անատոլի Չուբայսին...

– Ես բիզնես եմ կառուցում միայն այնտեղ, որտեղ հասկանում եմ առանձնահատկությունները և բիզնես գործընթացները:

– Իսկ շատերը մասնակցում են այնտեղ, որտեղ ոչինչ չեն հասկանում:

– Իհարկե: Բայց ի՞նչ է տալիս նման մոտեցումը: Սկսելով ձեզ հետ խոսակցությունը, մենք ձեզ հետ նշեցինք, որ շատերը ճգնաժամի ժամանակ տուժեցին, իսկ «Տաշիրը» բարելավեց իր ցուցանիշները: Հավանաբար ձախողումների պատճառն այն էր, որ նրանք մինչև վերջ չէին հասկանում ոլորտի առանձնահատկությունները, որի մեջ մտել էին:

– Շինարարները բողոքում են, որ մեզ մոտ չեն բավարարում ժամանակակից տեխնոլոգիաները, հաստատությունները և մասնագետները:

– Ես համաձայն եմ նրանց հետ: Տեխնոլոգիաների անբավարարությունը մեծապես արգելակում է ճյուղի զարգացումը և արդյունքում՝ բերում է ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման: Օրինակ՝ Մոսկի օլիմպիական օբյեկտները, որտեղ մասնագետներից պահանջվում էր ամենաբարձր որակավորում, ոչ մի շինարարական ընկերություն չկարողացավ վստասակել: Մոսկիի մեր նախագծերը միակն էին, որոնք մենք իրականացնում ենք փաստով:

– Իսկ Սոչիում Դուք ի՞նչ եք կառուցում: Որտեղի՞ց վստասերը:

– Մենք մտանք Մոսկիի նավահանգստի և Առևտրացուցադրական կենտրոնի կառուցման արդեն պատասխանի նախագծի մեջ: Ցավոք, հետագա աշխատանքը ցույց տվեց, որ նախագծերը կազմված էին այն աստիճան անզբաղեղ, որ իրականացնել դրանք, առանց նախահաշվից դուրս գալու, չափազանց ծանր է:

– Ձեզ առաջարկե՞լ են Ձեր նախագծերով դուրս գալ արտասահման:

– Այո, նման առաջարկներ մենք անընդհատ ստանում ենք: Լուծումների հարցում չենք շտապում. սկզբում պետք է պատրաստվել նոր շուկաների յուրացմանը և հաշվարկել ռիսկերը: Չնայած մենք արդեն

Դեպի Երկիր, դեպի Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան

Այսօր բացեցի աչքերս ու վերջապես հասկացա՝ ազատ ծնվեցի, ստրուկ մեռնելու եմ: Ինքնագիտակցությանս պարզեցումից ցնցված լրիվ արթնացա ու խեղդվողի բնագործ փորձեցի կառչելու որևէ բան գտնել: Հայացքս ընկավ պատուհանին՝ մութ էր, լույս չկար: Դեռ գիշեր էր: Ինչ անեմ գիշերով, ինչու գիշերով: Գուցե լույսով իրերի հերթականությունն այլ կերպ դասավորվեր՝ ստրուկ ծնվեցի, ազատ մեռնելու եմ: Իսկ, ասենք, եթե ցերեկով այդ նույն հերթականությունը հայտնաբերեի, հասկանալի, ինչ պիտի անեի: Ազատ-ստրուկ, ստրուկ-ազատ: Երկու բառերի միջինըրը գծիկ է, չէ, գծիկ չի, մեխ է, որն ինձ գամել է անորոշությանը, գրկել...

Ինչից է գրկել՝ անձրագիր ապրելուց: Ի սեր Աստծո, խոսքը կենսաբանական կեցության մասին չէ՝ շնչել, ուտել, ծնել, մեռնել: Ապրելն ու մեռնելը դատարկ բառեր չեն, իրականություն են: Չգիտեմ, որն է դաժան: Շուտով կ'մտածեմ դրա մասին:

Բնապահպանության նախարար էլ ունենք, սակայն ձմեռը չի ավարտվում: Կենսունակության գերածախս տված իմ դիմադրողականությունը շփոթված մասցել է անհուսության ու հույսի խճճված բավիղներում: Արհեստական գրգռները, որ ներարկվում են մամլո քրմերի միջոցով, մի կերպ օգնում են դիմանալ:

Մշակույթ, մարդու իրավունքի պաշտպան, Ջուդայի խաչքարերի կոտորած, ազատագրված տարածք, արնահոսող Սևան, գազի հետ երկինք ճախրող ժողովուրդ ինձ բերում, հասցնում են «Լինել, թե չլինել» երկրնորանքին, որը համ ես էի մոռացել, համ էլ երևի թե շեքսպիրամու ազգս: Լավ է, թե վատ այս մոռացկոտությունը: Ոնց որ թե լավ է՝ իր քաղաքական գործիչների բոլորկին, իր մտավորականության երիցս առհամարված ընտրանուն հղում է անում ազգս, թող նրանք մտածեն, ինքը դատարկ բաների ժամանակ չունի, ինքը ապրում է:

Ապրում է՝ լավ, թե վատ: Հարյուր հարցվածներից մի փոքր հաստատելի կարծիքով՝ լավ, Արցախի պրոբլեմը չի ազդում իրենց կյանքի գործընթացի վրա: Մեծամասնության կարծիքով վատ է ապրում, և մեղավորը Արցախն է (հեռուստաընկերություններից մեկի հարցախոյզի արդյունք): Բա ոնց,

Արցախը մեղավոր է, ասենք, այսքան ծառ կտրվեց, հսկայական անտառաշերտեր վերացան երկրում, հողը սողանք է տալիս, հողի սողանքի նման ժողովուրդը հեռանում է, ձյան ծանրությունից տանիքները փլուզվում են (իզուր չեն ասում «տունդ գլխիդ փուլ գա»), փողոցներն անանցանելի են աղբի առատությունից, կոռուպցիան ու կաշառակերությունը կենսակերպ է, թռչունագրիպը շուտով կգա, հավատն ու արժանապատվությունը գրոյական է, ռաբիսը ինեղում է...

Իսկ մյուս կողմում Մուհամեդի հետևորդները ոտքի են կանգնել ու չեն նստում: Տարիներ առաջ մի ողորմելի վարչապետ, ոճն դանիացի, ներողություն խնդրեց այդ հետևորդներից: Փառք ու պատիվ նրանց ու նրանց Մարգարեին:

Իսկ մեր կողմերում, մեր երազների Եվրոպայում, եթե շարունակենք այսպես, հստակ չլիանանք որպես պաշտպան, սահմանապահ (միշտ էլ պահպանել ենք), էյֆելյանը կդառնա աշխարհի ամենանշանավոր միսարեթը: Անհավատ ու անասոված Եվրոպա: Նրա համար Օմբուդսմենը փոխարինել է Քրիստոսին, բացարձակ արժեք է: Այս այդ մարդու իրավունքը՝ մերօրյա քաղաքակրթական գալակտիկայի միջուկը՝ պստիլի սև խոռոչ, գերծանր նյութ, որ «ես» է կոչվում ու կլանում է իր պարույրի մեջ ընկած ամեն ինչ՝ ազգային արժանապատվություն, ժողովրդի իրավունք, պատմական ճշմարտություն, արդարություն, հաղթանակ: Կերջապես, որպես հստակ, որոշակի սեռի պատկանող անձ: Անձից դուրս է պրծնում «ես»-ը: Անդեմ, տձև մի գանգված, որի հետ խաղում են Տիբեթի մեծերը:

Մյուս կողմում Մաքսային Միությունն է՝ Արմազեդոնի, չբացահայտված թռչող օբյեկտի նման մի բան, որ կա, բայց մենք չենք տեսել, կամ էլ տեսել ենք հնգաթև աստղի ճաճանչներով:

Իսկ հանգիստ ապրում էինք: Ամենակարևորը՝ հանգիստ: Արցախը քչփորեց այս ողջ կեղտը ու արևերես հանեց: Անձպտուն վայելում էինք կյանքը մեր խոռոչով կաններում, մեր հերթագրումներով՝ բնակարանից մինչև սառնարան ու ավտոմեքենա, մեր կոլխոզ-սովխոզով, մեր ԿԳԲ-ով ու

գառամյալ առաջնորդներով, մեր մենմիակ կենտրոնով՝ դամբարանից մինչև Կրեմլ ընկած, դեպի տաճար տանող ճանապարհով, համաշխարհայնացման մեր արևելյան միաբերե...-ով, մեր բարբառանք-անեկոտներով, որ այսօր «ասեկոտե» են կոչվում, շշուկով ասվող ճրջմարտություններով և երկարատև, բուն ծափահարություններով: Այն ժամանակ լեզուն ոսկոր ուներ, կարելի էր նրան ջարդել, ուստի ատամներին տակ էինք պահում, որ չջարդեն:

Հիմա անուկոր լեզու է, ատամ էլ չունենք: Խոսում ենք ու խոսում, մեծամասնությունն ասում է, Արցախն է մեղավոր: Հարցախոյզի արդյունք է, փաստ, որն անփոփելով, գոհունակությամբ հայտարարում են. «Լաբաբադյան հիմնահարցի պատճառով է, որ Հայաստանը տնտեսական առաջընթաց չունի, վատ ենք ապրում»: Բա:

Ինչ-որ հիշողություն մեջներդ չարթնացավ: Չայնիս էլնեչների, հարցադրման ոճի առումով, որևէ բան, թեկուզ աղոտ չնմարվեց, ասենք, չի՛ղեցիք: «Լավ չես ապրելու, Մերգ ջան»: Հի՛ղեցիք: Բա որ Առաջինը ասում էր: Ինչու չլսեցիք, չլսեցիք նրան: Հի՛ղեք: Մոռացկոտ էք: Մոռացաք ցեմենտի գողերին, սաֆալտի ֆիդայիներին, Աղետի գոտու թալանիչներին, մոռացաք գթության այանթալանը, մոռացաք, թե ինչպես ձեր ոսկեհատ ցորյանի մի մասը շաղ տվեցիք հանուն Արցախի: Փառք Աստծո, մեր աչքի լույսը՝ Արցախը, անկախ մեր բարբառանքից, մեր անգոր չարությունից, ծլում ու ծաղկում է: Մեր ժողովրդի մի հատվածը, որի ծննդավայրն է ընդամենը, իսկ Հայրենիքը՝ Հայաստանը, և Աստված կպատժի բոլոր նրանց, ովքեր այլ ձևակերպում են տալիս այս պարզ ճշմարտությանը՝ մեր փոքր սածուն բաժանելով հայաստանցիների և դարբաբաղցիների, հայաստանցիների և ախպարների, հայաստանցիների և փաստականների, նրանց, ով կոտորակում է Հայոց Աշխարհը:

Մեր կարգախոսը մեկն է՝ դեպի Երկիր, դեպի Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան:

Ավարդ ԴԵՏՐՈՍՅԱԼ

200

շատ ներդրումներ ենք արել Հայաստանում: Կարծում եմ, որ Եվրոպա դուրս կգանք նրանով, ինչն ամենապահե ենք անում՝ առևտրի կենտրոններով: Որպես տարբերակ՝ քրննարկում ենք հյուրանոցային ոլորտը:

– **Ի՞նչ փոփոխություն կկրի Ձեր կազմակերպությունը հինգ տարի անց:**

